№ 17 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ № 17

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ
ՆԵՐԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ
(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը 9 ր., 9 ամսվանը 8 ր., 8 ամսվանը 7 ր., 7 և 6 ամսվանը 6 ր., 5 ամսվանը 5 ր., 4 ամսվանը 4 ր., 3 ամսվանը 3 ր., 2 ամսվանը 2 ր., 1 ամսվանը 80 կ. և 20 կ. պոստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշ։

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rèdaction du journal „MSHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՅՍՕՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ,
ՕՐ. ԹԱՄԱՐ ԱՒԵՏԻՍԵԱՆ
ՂՈՒԿԱՍԵԱՆԻ
մարմնի ամփոփման եօթնօրէքին, Վանքի աւագ եկեղեցում տեղի կունենայ պատարագ, որից յետոյ հանգուցեալի դամբարանի վրա կը կատարվի
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Պատարագի սկիզբը առաւօտեան 10½ ժամին, իսկ հոգեհանգստինը՝ 12 ժամին։
89. 1—1

Թիֆլիսի Ժողովարանում
յունվարի 28-ին ՆՇԱՆԱԿՎԱԾ
ՋՕԿԻ ՊԸՐԿԻՆԴԱՆ
երեկոյթը յետաձգվում է փետրվարի 2-ին, չորեքշաբթի, Աբէլեանի բենեֆիսի առիթով։

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Հինգշաբթի, յունվարի 27-ին
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ
Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը
կը ներկայացնէ
ՔԱՆԴԱԾ ՕՋԱԽ
Կոմէդիա 3 արար., Գ. Սունդուկեանի
ԵՐԳԵՐՈՎ և ՊԱՐԵՐՈՎ
Սկիզբը երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
Գլխ. ռէժիսսեօր՝ Ա. Արմէնեան
Հիւրերը՝ յանձնարարութեամբ՝ վճարում են մուտքի համար 50-ական կոպէկ։
Ներկայացման տոմսակները՝ 25—75 կ. արժ., ծախվում են Ժողովարանի շվէյցարի մօտ։
Ներկայացումից յետոյ ՊԱՐԵՐ։

ՎԵՐՋ ԴՐԷՔ ԿՐՕՆԱԿԱՆ ՖԱՆԱՏԻԿՈՍՈՒԹԵԱՆ

XX-րդ դարում շարունակվում են կրօնական ֆանատիկոսութեան մռայլ արտայայտութիւններ։

Մատթէոս II Կաթողիկոսի մահվան առիթով Թիւրքիայի հայ-կաթօլիկների պատրիարք Թերզեան արքեպիսկոպոսի վարմունքը, երբ նա չը կամեցաւ գալ հայոց եկեղեցին՝ մասնակցել հանդիսաւոր հոգեհանգստին, որովհետև կաթօլիկ եկեղեցին հերետիկոսական է համարում հայոց եկեղեցին—դեռ շարունակում է այսօր էլ յուզել մտքերը։

Նոյնպիսի կարծիք հայոց եկեղեցու մասին յայտնեց և ռուսաց նշանաւոր թերթերից մէկը՝ «Նովոյէ Վրէմիա» Մէնշիկովի բերանով։

Եթէ ռուս թերթի կարծիքը չը պէտք է առանձին ուշադրութիւն գրաւէր հայերի կողմից, իբրև որոշ նպատակով և չարամտութեամբ արտայայտված մի կարծիք, Թերզեան պատրիարքի վարմունքը չէր կարող չը յուզել հայ հասարակական կարծիքը և հայ մտքերը, որովհետև ենթադրվում էր, որ միանգամ ընդ միշտ վերջացած պէտք էր համարել հայ-կաթօլիկների համար այն հարցը, թէ հայ-լուսաւորչական եկեղեցին նոյնչափ առաքելական և կաթօլիկէ է, որչափ հայ-կաթօլիկ եկեղեցին։

Սակայն մենք չը պէտք է մի առանձին նշանակութիւն տանք Թերզեան պատրիարքի վարմունքին, որովհետև եթէ հայ-լուսաւորչական և հայ-կաթօլիկ եկեղեցիների ներկայացուցիչների կողմից մի-մի անգամ տեսնում ենք կրօնական մոլեռանդութեան արտայայտութիւններ (օրինակ հայր Ղևոնդ Ալիշանի մահվան ժամանակ Թիֆլիսի թեմի կառավարիչ Գարեգին վ. Յովսէփեանն չը թոյլատրեց հոգեհանգիստ Վանքի եկեղեցում), պէտք է ի նկատի ունենանք, որ հայ-կաթօլիկ և հայ-լուսաւորչական հասարակութիւնները շատ առաջ են գնացել լուսամիտ գաղափարների ասպարիզում և համամիտ չեն իրանց կրօնական ներկայացուցիչների ուղղութեան։

Եւ դրա ամենալաւ ապացոյցը այն է, որ կաթօլիկ հայ հասարակութիւնը Կ. Պօլսում իր մասնակցութեամբ հոգեհանգստին ցոյց տուեց իր բացասական վերաբերմունքը Թերզեան պատրիարքի ուղղութեան և չեշտեց այն հանգամանքը, որ եղբայրական համերաշխութիւնը, համաձայնութիւնը անհրաժեշտ է միևնոյն հայկական եկեղեցու երկու բաժանեալ մասերի մէջ։

Այդ հանգամանքը երբէք չը պէտք է ազդէ մազաչափ անգամ երկու հայ համայնքների եղբայրական միութեան և համերաշխութեան գաղափարի վրա։ Եւ մենք խորհուրդ ենք տալիս Կ. Պօլսի հայ մամուլին մոռացութեան տալ այդ տխուր միջնադէպը։

Հ. Առաքելեան

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Բեռլին. — Սօցիալիստների լիդէր Զինգէրի թաղմանը սպասվում է մասնակցութիւն 100,000-ից աւելի մարդկանց՝ լինելու են ի միջի այլոց և միւս կուսակցութիւնների պատգամաւորներ։

Բեռլինի քաղաքային դուման միաձայն պահանջ դրեց, որպէսզի ոստիկանութիւնը քաղաքացիներին դիմումներ անելիս դուրս չը գայ օրինականութեան սահմաններից։

Վիէննա. — «Neue Freie Presse»-ում տպված է «Revue de Deux Mondes»-ի խմբագիր Պինօնի յօդուածը պոտսդամեան տեսակցութեան մասին, որի մէջ այն միտքն է յայտնված՝ թէ այդ համաձայնութեամբ Գերմանիան, գուցէ, ձգտում է մղել Ռուսաստանին պարսկական աւանտիւրի մէջ, որ կը կապէ Ռուսաստանի գործողութիւնների ազատութիւնը եւրոպական սահմանագլխում։

Վիէննա. — Ձեխ ուսանողները որոշեցին աշխատել ստեղծելու բոլոր համալսարանների ուսանողների կոմիտէտ կղերականների դէմ մաքառելու համար։ Կրակովի ուսանողները դիմում են ազգամնակութեանը առաջարկութեամբ՝ ցոյցեր կազմակերպել ի նշան համերաշխութեան ուսանողների հետ։

Վիէննա. — Արաբները վերցրին Մինաշ և Բէյտուլֆէլահ քաղաքները։ Պաշտօնեաները փախան։ Կ. Պօլսի դեսպանական շրջաններում Թիւրքիայի դրութիւնը Արաբիայում համարում են կրիտիկական։

Լօնդօն. — Ի նկատի ունենալով այն սպառնական դրութիւնը, որպիսին Թիւրքիան գրաւել է Կովէյտի սուլթանի՝ իրան վասալ լինելու հարցում Պարսից-ծոցի վերաբերմամբ, երեկոյեան բոլոր լրագիրները յուզվել են և խօսում են ծովային ցոյցի անհրաժեշտութեան մասին. «Մենք չենք կարող թոյլ տալ,—ասում է «Ev. Times»-ը,—որ Թիւրքիան գրաւէ Կովէյտը, ուր մենք ծախսել ենք խոշոր գումարներ և զոհեր տուել, պահպանելով այնտեղ մեր պրէստիժը»։

Աթէնքից ստացված մասնաւոր տեղեկութեան համաձայն, յունաց ազգային ժողովը մօտիկ ապագայում վերականգնելու է պրինցների իրաւունքները։ Յայտնի է, որ զինուորական լիգայի ճնշման տակ թագաւորական տան բոլոր պրինցները հեռացվեցին զօրքում հրամանատարներ լինելու պաշտօնից. Նրանց վերաբերմամբ պահվեց սոսկ պատուաւոր դեր։ Վիրաւորվելով այդ տեսակ վճռից, նրանք հրաժարական տուին և մեկնեցին արտասահման։ Այժմ Վէնիզէլօսը կամենում է նրանց իրանց նախկին պաշտօններին կոչել։ Անկասկած է, որ այդ միջոցը կընդունէ նաև պարլամենտը, որի ղեկավարն է հանդիսանում Վէնիզէլօսը։ Այդ պատճառով սպասում են, որ պրինցները շուտով կը ստանձնեն իրանց պաշտօնները զօրքում։

Պետերբուրգ. — Չը նայած ծովային մինիստրի առարկութեան, պետական պաշտպանութեան մասնաժողովը որոշեց ծովային վարչութեանը յատկացնել 28 միլիօն րուբլի նախահաշւից դուրս։

Պարիզ. — «Temps»-ը արտաքին գործերի մինիստր Պիշօնի սենատում արտասանած ճառի առիթով գրում է. «Մինիստրը արհամարհանքով է վերաբերվում լրագրական տեղեկութիւններին։ Ի զուր։ Մամուլը յաճախ կառավարութիւնից աւելի աչալուրջ է։ Մինիստրը իր ճառում չը պատասխանեց «Temps»-ի դրած հարցերին՝ թէ ինչպէս է վերաբերվում Ֆրանսիան դէպի Ռուսաստանի և Գերմանիայի համաձայնութիւնը Բաղդադեան երկաթուղագծի առիթով, և ինչպիսի դիրք է բռնելու Ֆրանսիան այդ կարևոր հարցում։ Պիշօնը—ասում է «Temps»-ը—յամառութեամբ լռում է Բաղդադի երկաթուղու հարցի նկատմամբ»։

Պարիզ. — «Eclair»-ը գրում է. «Պիշօնը չէ խօսում դաշնակիցների միջև կապված զինուորական կօնվենցիայի մասին։ Այդ կօնվենցիան մի տեսակ չափ է մեր վերաբերմունքի համար առ մեր դաշնակիցները։ Այո կամ ոչ՝ սրանում է ամբողջ խնդիրը։ Մեզ արած յայտարարութիւնների մէջ մենք ոչ մի երաշխաւորութիւն չենք տեսնում։ Այդ տաք-տաք վստահացումները հանգստացնում են միայն նրանց, ովքեր ընդունակ են չափել փակ աչքերով»։

Բեռլին. — «Vossische Zeitung»-ը խիստ քննադատութեան ենթարկեց Պիշօնի վերջին ճառը։ Լրագիրը գտնում է, որ ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը զօռ է տալիս ֆրազներին փաստերի դէմ։ Նա բառեր է գործածում այնտեղ, ուր հարկաւոր է ուղղակի պատասխանել հարցերին, ինչպէս օրինակ այն մասին, թէ բանակցութիւններ վարվում են, արդեօք, Ֆրանսիայի և Անգլիայի միջև զինուորական դաշնակցութիւն կապելու վերաբերութեամբ։ Լրագիրը բնորոշում է Պիշօնի ամբողջ ճառը իբրև ցոյց Գերմանիայի դէմ և վերջում հեգնում է ֆրանս-ռուսական միութեան վիճակը, որը, գերմանական լրագրի կարծիքով, կորցրեց զինուորական արժանիքը։ Անհասարակ, լրագիրը Պիշօնի դիրքը գտնում է խախուտ և գուշակում է նրա քաղաքականութեան անկումը։

Լօնդօն. — Յունվարի 20-ին, յայտնի լօրդ Լիտլդօնի նախագահութեամբ պարլամենտում կայացաւ պատգամաւորների ժողով, որ համակրութիւն յայտնեց կանանց շարժմանը։ Որոշվեց այս նստաշրջանին օրինագիծ ներկայացնել կանանց ընտրողական իրաւունքի մասին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մոսկվայի „Голосъ Москвы" լրագրի յունվարի 19-ի համարում (№ 14) «Կաթողիկոսական կանդիդատներ» վերնագրով հետևեալ յօդուածն է տպված.

«Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվելու ամենից շատ շանսեր ունի Կ. Պօլսի նախկին պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանը, որին հայ յեղափոխական խաժամուժ ամբոխը (чернь) քիչ մնաց բզկտէր Թիւրքիայի պետական յեղաշրջման օրերում։ Նրան մեղադրում էին հասարակական գումարներ իւրացնելուն և նախկին սուլթան Աբդիւլ-Համիդին կողմնակից լինելուն մէջ։ Սակայն բոլոր այդ մեղադրանքներից

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ՎԱՆՔԸ*)

(Ամառային յիշողութիւններից)

Մեծ տաճարի արևելեան կողմը կայ մի փոքր, բայց գեղեցիկ շինված մատուռ, որը ըստ ենթադրութեան վանքի դրադարանն է եղել, իսկ գիւղի մէջ գտնվում է ս. Հռիփսիմէի մատուռը, որի կաթուղիկէի վրա արձանագրված է՝ «Տէր Աստուած ողորմեա Խաչատուր վարդապետին և Բարսեղին՝ շինողաց եկեղեցւոյս և ամենայն աշխատողացն ի սմա»։

Սա այն Խաչատուր վարդապետն է (Տարօնեցի), Հաղարծնի վանքի միաբանը, որի անունը՝ իբրև շինարար եկեղեցականի՝ շատ արձանագրութիւնների մէջ յիշվում է։

Վերջապէս ամենաբարձր տեղում կանգնած է մի մատուռ ևս յանուն ս. Համբարձման, որի գաւթում ամփոփված է Գօշ Մխիթարի աճիւնը 1213 թւին։

Հասնելով խորին ծերութեան և կանխապէս զգալով իր մահը, Մխիթարը կանչում է իր մօտ վանքի ժողովուրդը, որը աշխատել էր նրա հետ վանքի և եկեղեցու շինութեան վրա, և օրհնում է նրան։

Օրհնում է նմանապէս իր աշակերտներին, որոնցից մէկին, Մարտիրոս անունով, կարգում է իր տեղը վանահայր և առաջնորդ։

Յետոյ գրում է կտակ Իվանէ սպասալարի անունով (Զաքարէն այդ ժամանակ արդէն վախճանված էր) և յանձնում է նրան վանքի և միաբանութեան խնամատարութիւնը։

Մարտիրոս վանահայրը միաբանութեան հետ մեծ սգով և փառաւոր հանդէսով թաղում են իրենց բազմերախտ և քրտնաջան հոգևոր հօր մարմինը*)։

Իբրև ապացոյց Մխիթարի սրբութեան Կիրակոս պատմագիրը ասում է.

> «Եւ մինչև ցայսօր գերեզման նորա օգնէ ցաւագնելոց, որք հաւատով ապաւինեն յաղօթս նորա և զհող տեղւոյն հանապազ տանեն ի պէտքս հիւանդաց և անասնոց, զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ կենդանութեամբ և մահվամբ»։

Մինչև այժմ Գօշավանքի հիւանդ և ցաւագար կանայք մօտենում են խորին հաւատով Մխիթարի շիրմին և Աստուծոյ ողորմութիւն հայցում։

Նոյն Կիրակոսը առաջ է բերում հետևեալ պատմութիւնը, որ նոյնպէս ցոյց է տալիս, թէ որքան պաշտված էր առաքինի Մխիթարի անունը ժողովրդի մէջ։

> «Դէպ եղև երբեմն զի պաշտօնեայք նորա (Մխիթարի) գային գրաստօք բարձեալ զգինի ի պէտս Վանից։ Վրացի ոմն՝ Բասիլիա անուն, եկեալ բռնութեամբ կամէր առնուլ ի նոցանէ ի գինւոյ անտի, զի գործակալ էր նա Իվանէի ի վրա մայրոյն, որ պահէր զտեղի իշխանի նորա։ Եւ պաշտօնեայքն ասեն ցնա՝ մի նեղեր զմեզ, քանզի Գօշին եմք… Իսկ թշուառականն անարգեաց զնոսա և զԳօշն հայհոյութեամբ. և իբրև եկն յայն տեղի, որ յիշէր զանուն նորա ձաղանօք՝ անդէն վաղվաղակի համրացաւ և կապեցաւ լեզու նորա և այնպէս եկաց բազում աւուրս, մինչև հառաչանօք խնդրեաց թողութիւն, և ամենայն ոք, որ տեսանէր զայրն, գովէին զծառայն Աստուծոյ»։

Մխիթարը հռչակեց իր անունը «Դատաստանագիրք հայոց» նշանաւոր աշխատասիրութեամբ, ուր ամփոփված են մեր հին եկեղեցական կանոնները, ժողովրդական և իրաւաբանական աւանդութիւնները սիստեմական կարգով։

Նրանից առաջ հայերը չունէին օրէնսգիրք և Մխիթարի գործը առաջին և անզուգական փորձն է լինում հայ մատենագրութեան մէջ, որով նա իր ժամանակին մեծ ծառայութիւն մատուցեց հայ ժողովրդին և եկեղեցուն։

Դատաստանագրքից առաջ հայերը՝ ստիպված՝ դիմում էին այլազգիների՝ մանաւանդ մահմեդականների՝ դատարանին, որից ժողովուրդը՝ իբրև քրիստոնեայ տարր, չարաչար տուժում էր։

Մխիթարը նկատելով ընդհանուր դատաստանագրքի պակասութիւնը և հարկաւորութիւնը հայ ժողովրդի համար, որոշում է ձեռնարկել այդ մեծ և նշանաւոր աշխատութեան, որն գլուխ է բերում ժողովրդական ստեղծագործութեան գրաւոր և բանաւոր աղբիւրները ուսումնասիրելուց յետոյ։

Մխիթարի դատաստանագիրքը նշանաւոր է ոչ միայն իբրև իրաւաբանական գրուածք։

Մեր մատենագրութեան մէջ, ասում է Վահան վարդապետը, շատ քիչ գիրք կայ, որ ունենար այդպիսի ընդարձակ գործնական նշանակութիւն և գործածութիւն, որպիսին ունեցել է այդ դատաստանագիրքը թէ ժողովրդի և թէ եկեղեցու մէջ։ Սրա հաստատութիւնն է նախ այն, որ խիստ շատ օրինակներ կան ցրված զանազան տեղերում։

Լեհաստանի և Ղրիմի հայերի ազգային օրէնքները քաղված են Մխիթարի դատաստանագրքից, որի ապացոյցը կարող է լինել նրա թաթարերէն թարգմանութիւնը։

Նա ունեցաւ մեծ ազդեցութիւն նաև Վրաստանի պետական օրէնսդրութեան վրա. այսպէս՝ վրաց Վախտանգ VI թագաւորի օրէնսգրքի մէջ մտել են Մխիթարի կազմած օրէնքների և կանոնների ժողովածուն 430 յօդուածներում, որով ղեկավարվում էին Վրաստանում բնակվող բազմաթիւ հայերը։

Ինչպէս յայտնի է, Վախտանգ թագաւորի այդ օրէնսգիրքը, որի երրորդ բաժանմունքը կազմում էին Մխիթարի դատաստանագրքից քաղուած յօդուածները, օրէնքի զօրութիւն և գործադրութիւն ունէին թէ վրաց թագաւորութեան ժամանակ և թէ ռուսաց տիրապետութեան միջոցին երկար տարիներ։

Եւ այսպէս ուրեմն Մխիթարի դատաստանագրքի մի մասը կողմնակի կերպով մտաւ և Ռուսաստանի օրէնսդրութեան մէջ։

Եւ ահա այս գիրքը, որ այնքան մեծ նշանակութիւն և ընդարձակ գործադրութիւն ունեցաւ ոչ միայն հայ ժողովրդի, այլև օտար պետութեան մէջ, կարող է մի անգին՝ եզակի գոհար համարվել հայ մատենագրութեան մէջ, ասում է հ. Բաստամեանը։

Նրա յօրինողը պիտի ունենար մեծ մտաւոր զարգացում և գիտական պատրաստութիւն, որով իրօք առատօրէն օժտված էր Գօշ Մխիթարը։

Ժամանակակիցները նրան անուանում էին Մեծ վարդապետ, «զի այսպէս կոչէին զնա սակս պատւոյ» — ասում է Կիրակոս պատմագիրը։

Դատաստանագիրքը գրելու ժամանակ Մխիթարը ջերմ և անկեղծ խրախոյս գտաւ Աղուանից Ստեփաննոս Բ. կաթողիկոսի մէջ, որը խորին յարգանքով և ակնածութեամբ վերաբերվում էր Գօշի գիտական պատրաստութեան։

Ահա ով էր թաղված ս. Համբարձման մատուռի գաւթում մի մեծ տապանաքարի տակ, որի վրա այժմ հազիւ կարելի է կարդալ «Մխիթար» անունը։

Ի՞նչ է մնացել այժմ այդ իմաստուն վարդապետի մենաստանից և վանքից։ Ո՞ւր են այն անտառները, այգիները, ջրաղացները, գիւղերը, վարելահողերը և ամարանոցները, որոնք ընծայված էին վանքին ի յարգանս Մխիթարի հայ իշխաններից և սպասալարներից։

Ո՞ւր է այն շէն միաբանութիւնը, որ եղբայրական ջերմ սիրով կապված իրանց մեծ վարդապետի և ժողովրդի հետ, Տանձուտայ ձորը դարձրել էր մի ընտանի օջախ, լի հոգևոր մխիթարութեամբ և երջանկութեամբ։

Անգութ կրօնոսը իր ամեն բան կլանող

Տես «Մշակ» № 16.

*) Մխիթարայ Գօշի դատաստանագիրք հայոց. Վահ. վ. Բաստամեան, Վաղարշապատ, 1880։

ներկայումս ոչինչ չէ մնացել։ Կ. Պոլսի հայոց երեսփոխանական ժողովը անհիմն է գտել բոլոր այդ ամբաստանութիւնները*)։

«Օրմանեան արքեպիսկոպոսը ստացել է բարձր, համալսարանական կրթութիւն Հռոմում և Պարիզում և ազատօրէն խօսում է եւրոպական գլխաւոր լեզուները, որոնց թւում և ռուսերէնը։ Նա ունի մի քանի գնահատելի երկասիրութիւններ հայոց եկեղեցու մասին ֆրանսերէն, իտալերէն և հայերէն։ Օրմանեանը հռչակված է իբրև տաղանդաւոր վարչագէտ։ Նա այժմ 67 տարեկան է, բայց դեռ կայտառ է և նախանձելի առողջութիւն ունի (նա բանջարակեր՝ վեգետարիանական է)։

«Երկրորդ կանդիդատը համարվում է Օրմանեանի աշակերտ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեանցը, որ ստացել է բարձր կրթութիւն Բեռլինի և Լայպցիգի համալսարաններում։ Երկար ժամանակ Կարապետ եպիսկոպոսն եղել է էջմիածնի ճեմարանի ռէկտոր և վայելել է իր աշակերտների անկեղծ սէրը։ Այժմ նա Աստրախանի թեմի առաջնորդն է։ Ունի մի քանի լուրջ երկասիրութիւններ գերմաներէն և հայերէն։ Նրա աշխատութիւններից մինը այժմ թարգմանվում է ռուսերէն։ Նա 46 տարեկան է։

«Բացի այդ երկու անուններից, հայոց լրագիրները և հասարակութիւնը առայժմ ուրիշ անուն չեն տալիս**)։

Քիշինէվում հրատարակվող „Бессарабская Жизнь" թերթը յունվարի 13-ի իր համարում խօսելով այն մասին, որ տեղական հայ գաղութի մէջ եռանդուն խօսակցութիւններ և ագիտացիա էին մղվում ամենայն հայոց կաթողիկոսի առաջիկայ ընտրութիւնների համար, ասում է, որ գաղութի մեծամասնութիւնը ցանկալի կանդիդատ է համարում Սուքիաս արքեպիսկոպոսին։ Տալով այդ արքեպիսկոպոսի կենսագրութիւնը, ռուս թերթի յօդուածագիր Ե. Ս. ասում է, որ իբր նրա կանդիդատուրան ամենից ցանկալին է և ժողովրդականը հայերի մէջ և մանաւանդ մեծ ժողովրդականութիւն և սէր է վայելում Սուքիաս արքեպիսկոպոսը Բեսսարաբիայի և Նոր-Նախիջևանի հայերի մէջ։

Դժուար թէ այդ կարծիքը ունենայ որևէ հիմք։

Ն. Ի. ՊԻՐՈԳՈՎԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Խարկով, 16 յունվարի

Не говорите мнѣ онъ умеръ, онъ живетъ!
Пусть жертвенникъ разбитъ, огонь еще пылаетъ;
Пусть роза сорвана, она еще цвѣтетъ,
Пусть арфа сломана, аккордъ еще рыдаетъ.
Надсонъ

Մեծ, հանճարեղ մարդիկ ոչ երբեք չեն մեռնում։ Նրանք միշտ ապրում են այն ժողովրդի մէջ, որին ծառայել ու սիրել են և սովորեցրել են նրան նոյնպէս սիրելու և ծառայելու մարդկութեանը։ Նրանք իրանց թափանցիկ մտքի խորութեամբ, աշխատում են բարձրանալ իրանց հանճարեղութեան գագաթին և այդտեղից, այդ բարձր գագաթից խօսել մարդկութեան հետ։ Այստեղ կանգնած անսասան, նրանք իրանց ստեղծագործական մեծ ուժով, ինչպէս համաշխարհական մեծ մագնիս, քաշում են դէպ իրանց տառապող մարդկութիւնը։ Այդպիսիների թւին են պատկանում ռուս ազգի երկու մեծ զաւակներ Լ. Ն. Տոլստոյը և Ն. Ի. Պիրոգովը։

Մեր խօսքը վերջինի մասին է։

Երեսուն տարի է անցել այն օրից, ինչ վախճանվել է այդ հազուագիւտ մարդը, սակայն նրա ստեղծագործութիւնները, ինչպէս բժիշկ-մտածողի, բժիշկ-մարդասէրի և բժիշկ-քաղաքացու մնացել են կենդանի։

Յունվարի 15-ին Խարկովի Բժշկական Ընկ. համալսարանի հանդիսաւոր ընդարձակ դահլիճում կազմվեց հրապարակական նիստ, նուիրված ռուս մեծազոյն բժիշկ Ն. Ի. Պիրոգովի ծննդեան 100-ամեայ յիշատակին։ Դահլիճի խորքում, ամբիոնի մօտ, դրած էր Պիրոգովի մեծ պատկերը պատած թարմ ծաղիկներով ու շրջապատված տրօպիկական բոյսերով։ Խոր, մտածկոտ աչքերով նայում էր նա դէպի դահլիճը, որտեղ հաւաքվել էր ժողովրդի մեծ բազմութիւն։

Այստեղ կային համալսարանի պրոֆեսորները, Բժշկական Ընկ. անդամները, ուսանողներ, կուրսիստկաներ և այլն։ Հանդիսաւոր կերպով անցաւ այդ բացառիկ մեծարումը։

Նիստը բացեց Բժշկական Ընկ. նախագահ Բրաունշտէյնը. նա համառօտ կերպով ծանօթացնելով հանդիսականներին Ն. Ի.-ի կենսագրութեան հետ, յետոյ եկաւ բնորոշելու նրան ինչպէս մեծ-բժշկի, հումանիստի և քաղաքացու։ «Ն. Ի. Պիրոգով մեծ վիրաբոյժ էր անսովոր տեխնիկայով, մեծ կլինիկական, մեծ մարդասէր, ճշմարիտ, ազնիւ քաղաքացի։ Բարեսիրտ, մեղմ, ուրիշի դժբաղդութեան հեշտութեամբ արձագանք տուող, անսովոր կերպով խիստ և անողորմ՝ եթէ գործը վերաբերվում էր բարեկարգութեան, ճշմարտութիւն որոնող, իդէալներից իդէալ որոնող»։ Վերջը հռետորը զուգահեռագիծ քաշելով Պիրոգովի և Տոլստոյի միջև այսպէս վերջացրեց իր գեղեցիկ ճառը. «У обоихъ реализація въ мышленіи, идеализмъ въ настроеніи. Простота и правда одинаково присущи обоимъ. Религіозность и высшая мораль составляетъ сущность духа и доктрины того и другого... Но и большая разница между ними: ученье Толстого—утопія красивая, а идеалы Пирогова практически осуществляются».

Պրոֆ. Պրժեվալսկին բնորոշեց Ն. Ի.-ին, ինչպէս մեծ անատոմի։ «Չը կայ ամբողջ տիեզերքիս վրա այնպիսի մի բժշկական ֆակուլտէտ, որտեղ չիշխէ Պիրոգովի հեղինակութիւնը, չը կայ մի այնպիսի անատոմ, որ կարողանայ ասել թէ Ն. Ի.-ը ամենից բարձր չէ կանգնում»։

Բժ. Ալէքսէևը բնորոշեց Պիրոգովին ինչպէս մեծ վիրաբոյժի. իր ճառը նա վերջացրեց այսպէս. «Уже одна знаменитая «гипсовая повязка» сохранившая не одни тысячи жизней даетъ право Пирогову на памятникъ».

Պրոֆ. Պօգօդին շօշափեց մի հետաքրքրական հարց՝ «Ն. Ի. Պիրոգով և օտար ազգերը Ռուսաստանում»։ Նա ասաց, որ Ն. Ի.-ը միշտ սիրել և պաշտպանել է օտար ազգերին այնպէս, ինչպէս իր ուղղափառ ազգին։ Նա միշտ ընդդէմ է եղել անհանդուրժելիութեան և առանձնականութեան. «Անձնական համակրութիւնը կամ անհամակրութիւնը դէպի առանձին ազգեր չը պիտի ազդեցութիւն ունենան պետական իշխանութեան վրա»։ Վերջը յարգելի հռետորը վերջացրեց Ն. Ի.-ի հետևեալ գեղեցիկ խօսքերով. «Уваженіе къ націи, какъ къ таковой, уваженіе къ націи, какъ части государства должно существовать. Призваніе за націями ихъ правъ составляетъ цементъ государства, связывающій его».

Ամենից վերջը խօսեց երկրորդ գիմնազիայի դիրեկտոր Պակտովսկին։ Նա ասաց, որ Պիրոգովի նշանակութիւնը ինչպէս մեծ մանկավարժի հիմնվում է նրա՝ Դոստոեվսկու և Տոլստոյի հետ ունեցած ազգակցութեան մէջ։ «Школа должна быть единой, доступной для всѣхъ; школа должна быть ареной для созданія на ней хорошихъ людей». Այսպէս է Ն. Ի. Պիրոգովի հայեացքը։ Ն. Ի. Պիրոգովը, ինչպէս և Լ. Տոլստոյը միշտ խոր հաւատով ու սիրով են վերաբերվելիս եղել դէպի անհատը և նրա կեանքը։ Մի անգամ մի ձմերային երեկոյ նա դաշտ է դուրս գալիս։ Հիւսիսային երկինքը իր պայծառ աստղերով զմայլեցնում է Ն. Ի.-ի մեղմ և զգացող սիրտը։ Տիեզերքը ներկայանում է նրան ինչպէս Աստուծոյ ամենասքանչելի ստեղծագործութիւնը, իսկ մարդկային խելքը այդ վեհ ու հրաշալի ստեղծագործութեան մօտ չափազանց փոքր մեծութիւն։ Այդ երեկոյ տուն գալով, խորասուզված տպաւորութիւնների տակ նա վերանորոգում է պօէտ Պուշկինի յայտնի «Даръ случайный»... ոտանաւորը այսպէս։

«Не случайный, не напрасный,
Даръ таинственно—прекрасный,
Жизнь—ты съ цѣлью мнѣ дана...»!

Ուսանող բժ. Յ. Ս. Ադամեան

ԿՈՎԿԱՍԻ ՄԵՏԱՔՍԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻՆ ԵՒ ԹԵԼ ՔԱՇՈՂ ՈՒ ՄԱՆՈՂ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐԻՆ

Վերջին ժամանակներս Կովկասի մետաքսարդիւնաբերողների և թել քաշող գործարանատէրերի իրանց կրած ճգնաժամի առիթով արտայայտած տրտունջ—գանգատները, ինչպէս հասարակական նոյնպէս էլ մասնագիտական հիմնարկութիւնների լուրջ ուշադրութիւնները դէպի իրանց դարձրին. վերջիններս հարկից ստիպված դիմեցին կառավարութեան աջակցութեանը այս չարիքի և վտանգի առաջն առնելու նկատմամբ միջոցներ գտնելու, որպէսզի չը շարունակվեն և չը կրկնվեն այս շահաւէտ արդիւնաբերութեան վերաբերմամբ այն ամեն անբարեյաջող հանգամանքները, որոնք մինչև այժմս անընդհատ տեղի են ունեցել և առաջացրել են ներկայ ճգնաժամը։

Այս միջնորդութիւնը, ի միջի այլոց, կայանում է նրանում, որ փաստալից պատճառաբանութիւններով ցոյց է տրվում և նրա հետ էլ խնդրվում է, որ արտասահմանից Ռուսաստան ներմուծվող մետաքսագործութեան ապրանքների և նիւթերի, այն է մետաքսաթելի և այլն մաքսը աւելացընվի, նոյնպէս և զանազան մենաշնորհումներ տրվեն այս ճիւղով պարապող գործարանատէրերին, այն է՝ թել քաշելու, ոլորելու, բանալու և այլն գործիքները և մեքենաները արտասահմանից անմաքս ստացվեն, բայց այս մի շարք միջնորդութիւններից և ոչ մէկը լուծումն դեռ ևս չէ ստացել մասամբ այն պատճառով, որ այդ դիմումների մէջ չեն երևում վիճակագրական այնպիսի փաստեր և ցուցմունքներ, որոնք կարողանային գործի արդի դրութիւնը պարզապէս ցոյց տալ և որ համոզէին կառավարութեանը, թէ որքան արդարացի է իրանց ճգնաժամը և ըստ այնմ այս հարցի վերաբերմամբ կարևոր միջոցներ ձեռք առնվեն։ Սրանում հենց իրանք թել քաշող գործարանատէրերն են ըստ մեծի մասի մեղաւոր, որովհետև իբր ժամանակին այս մասին եղած մասնագիտական հիմնարկութիւնների կամ նրանց ներկայացուցիչների անընդհատ դիմումներին ու այս ուղղութեամբ ծրագրած ու ձեռք առած միջոցներին նրանք ոչ մի գործնական օգնութիւն ցոյց չը տուին և գործին բացի չը մասնակցելուց, ամեն կերպ աշխատել են մինչև անգամ խուսափել այս հարցի վերաբերմամբ տրված հարցերին և հարցապնդումներին տալ որևէ ստոյգ տեղեկութիւններ, որպէսզի հնար լինէր հիմնվելով նրանց վրա, մօտաւորապէս ծանօթանալ երկրի մետաքսարդիւնաբերական որևէ ճիւղին վերաբերեալ ներկայ իսկական դրութեան հետ. այնպէս որ այժմ ստիպված ենք մի տեղեկութեան համար դիմել զանազան կողմնակի միջոցների, կամ քրքրել դիւանատների պահարանների դարակները, որպէս զի հնարաւոր լինի դուրս բերել այն տեղերից մի շարք կարևոր թուեր ու համեմատել մի տեղեկութիւնը միւսի հետ և վերջապէս երբեմն էլ բաւականանալ միայն ենթադրութիւններով և այլն։

Ուրիշ մետաքսարդիւնաբերական երկիրներում, ինչպէս՝ Ֆրանսիայում, Իտալիայում և սրանց նման զարգացած երկիրներում իրանք, մետաքսագործները ոչ միայն արգելք չեն լինում այս ճիւղի վերաբերեալ կարևոր տեղեկութիւններ տալուն ու ժողովելուն, այլ ընդհակառակն իրանց սեպուհ պարտականութիւնն են համարում ամեն կերպ անմիջական գործունէութիւն ցոյց տալ այս բաների մասին իրանց դիմողներին, նպաստել և մասնակցել հրատարակելու վիճակագրական մանրամասն ու ճշգրիտ տեղեկութիւններ ոչ միայն լոկ իրանց երկրին վերաբերեալ, այլ և այն օտար պետութիւնների մասին էլ, որոնց հետ նրանք համաշխարհային շուկայում այս ճիւղի վերաբերեալ նիւթերի համար մրցելու կարիք պիտի ունենան։

Մօտ ժամանակներումս Նուխիի մետաքսադիւնագործողների Կովկասի Փոխարքային տուած գրաւոր դիմումը շատ պարզօրէն վկայում են մեր ասածները։ Նուխիի համարեա թէ բոլոր հայ և թուրք մետաքսարդիւնաբերողները (թւով 70 հոգի) գրաւոր դիմելով Փոխարքային, խնդրում են միջնորդել, որ մեր երկրից արտասահման արտահանված չոր բօժօժի մաքսը աւելացնվի և Ռուսաստան ներմուծված հում (չը մշակված) մետաքսի թելի այժմս տեղի ունեցած մաքսը աւելացվի պուդին 10 ր., բայց դրա հետ ոչ մի խօսք չեն ցոյց տալիս թէ իրանց գործարանների արտադրութիւնը ինչ քանակի է հասնում կամ այդ արդիւնաբերութիւնը որքան կարող կը լինեն զարգացնել-շատացնել, կամ թէ կարող կը լինեն իրանց գործարաններում յետ տալ (թել քաշել) այն 100,000 փութ չոր բօժօժը մինչև 5 միլիօն րուբլի գումարի արժողութեամբ, որը այժմս Բաթումով արտասահման է արտահանվում, ուր և գտնում են իրանց համար շահաւէտ շուկաներ. և վերջապէս չեն յայտնում թէ այդ գործարանները կարող կը լինեն արդեօք ռուսական գործարաններին մատակարարել պէտք եղած քանակութեամբ նիւթ որոնք տարէնը բանացնում են 110,000 պուդից աւելի արտասահմանեան մետաքսաթել, աւելի քան 20 միլիօն ր., արժողութեամբ։ Ահա էական հարցեր, որոնք առաջ են գալիս և պահանջում են շուտափոյթ պատասխաններ և լուծումն։

Կովկասեան Շերամապահական Կայարանը մօտ օրերումս այդ մասին հարցապնդում արաւ տեղեկանալու մեր երկրումը գոյութիւն ունեցող բօժօժից թել քաշելու և նոյն թելը մանելու գործարանների թիւը, իմանալու իւրաքանչիւր տարվայ այդ նիւթերի արտադրութեան քանակը, գործարաններում եղած մեքենաների սիստեմի և քանակի մասին և այլն։

Կայարանի այս ձեռնարկութիւնը թէ բաւական հետաքրքրական է և թէ կարելի կը լինի այդ միջոցով լուծել վերը յիշված կարևոր հարցերը։

Թէև Կովկասեան Շերամապահական կայարանի հրատարակած «Трудъ» և «Извѣстія» աշխատութիւնների մէջ այս ուղղութեամբ տուած տեղեկութիւնները կարող են բաւականաչափ նիւթեր տալ, բայց մասամբ նրանք հնացած են և երկրի մետաքսարդիւնաբերութեան գործի արդի դրութեանը չեն կարող համապատասխան լինել, մանաւանդ 1905/6 թւականների հայ-թուրքական ընդհարումներից յետոյ, որին զոհ գնացին բաւականաչափ լաւ կազմակերպված ու սարքված թել քաշելու և մանելու գործարաններ։

Վերոյիշեալ հարցապնդումների մասին կայարանումս ստացված են պատասխաններ հետևեալ հարցերին՝ 1) գործարանը ո՞ւմ է պատկանում կամ ո՞վ է վերցրել նրան կապալով (անունը, ազգանունը)։

2) Ո՞րտեղ է գտվում գործարանը (քաղաք կամ գիւղ)։

3) Քանի՞ աւազան և քանի՞ աչք ունի։

4) Քանի՞ ճիլիկ կայ։

5) Տարեկան ո՞րքան թել է արտադրում։

6) Տարեկան քանի՞ փութ չոր բօժօժ է բանեցնում ա) իր շրջանի բերքից, բ) գաւառի և նահանգի, գ) ուրիշ տեղերից բերված, դ) մանրամասնօրէն ցոյց տալ Քութայիսի, Անդրկասպեան և Պարսկաստանի)։

7) Ո՞ւր և ինչ քանակութեամբ ծախվում է պարզ թելը (греза) և ոլորածը (утка)։

Ծանօթ.—Ցոյց տալ, թէ թել տալու մեքենաները ինչ սիստեմի են, որքան ձեռնաշարժ են և որքանը շոգեշարժ և այլն. այս ամենը լինելու են այն հիմնական փաստերը, որոնք պիտի նպաստեն նախ՝ մինչև այժմս կայարանում ժողովված նիւթերի պարզաբանելուն և երկրորդ՝ որոշել թէ մեր երկրումը թել քաշելու և մանելու գործը զարգանում է թէ ընկնում է, որոնց վրա հիմնվելով մենք հնարաւորութիւն կունենանք վճռել՝ կարո՞ղ կը լինեն արդեօք մեր թել քաշող և մանող գործարանները արտադրել բաւականաչափ բարձր յատկութեան այնպիսի մետաքս, որը համաշխարհային շուկայի պահանջներին պէտք գայ կամ թէ այդ գործարաններում արտադրած թելը գոնէ Մոսկվայի գործարաններում կարող կը լինեն երկրորդական տեղ բռնել կամ գնի կողմից մրցել ուրիշ երկիրներից բերված մետաքսաթելի թել և կամ թէ այդ թելերը որոշեալ արժէքից աւելի կամ պակաս գնով Մոսկվայի գործարանատէրերին ծախելու համար պէտք կը լինի նախ՝ բոլորը ուղարկել Ֆրանսիա՝ Լիօնի մետաքսաշտեմարանները և յետոյ այնտեղից յետ բերել Մոսկվա իբր ֆրանսիական կամ իտալական ապրանք, ինչպէս անում են մի քանի թել քաշողներ։

Վերջապէս, խնդրում ենք տեղական մամուլի ղեկավարներին և պարբերական թերթերին արտատպել մեր այս նկատողութիւնը, որպէս զի որքան հնար է, աւելի մեծ քանակով սա տարածվելով ազգաբնակութեան խաւերի մէջ, ծառայած լինի ընդհանուրի օգտին. հրաւիրում ենք նմանապէս և հասարակական հիմնարկութիւնների և գիւղական բանիմաց դասի ուշադրութիւնը դէպի ընդհանուրին բարօրութիւն տուող այս ճիւղի վրա և խնդրում ենք բացատրել, պարզաբանել ու հասկացնել ամեն մի հետաքրքրվող կիսակիրթ թել քաշողներին և մանողներին այս հարցապնդման օգտաւէտ նպատակը և նշանակութիւնը։

Մետաքսաբոյծ Բուլթաթելաձէ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սիմֆերօպօլ, 20 յունվարի

Ղրիմի թերակղզին վաղուց է, որ այսպիսի խիստ ու դաժան ձմեռ տեսած չէր ինչպէս այս տարի։ Թէև սեպտեմբերից—դեկտեմբերի 20-ները, համարեա թէ աշնանային էր անցնում, բայց դեկտ. 20-ից սկսած գետինը ծածկվեց խոր ձիւնի սպիտակ սաւանով։ Ցուրտը հասնում է 12°-ից—17° և մինչև օրս շարունակվում է։

Ի հարկէ, հարուստների համար հաճելի եղանակ է, որոնք ունեն իրանց բոլոր յարմարութիւնները... Միայն աւաղ, դառն է բնութեան խորթ զաւակների՝ աղքատ դասակարգի թշուառ դրութիւնը... Ճշմարիտ է, թէև մենք ունենք աղքատաց հոգաբարձութիւն և կանանց Բարեգործական Ընկերութիւն, որոնք իրանց ոյժերի ներածին չափ հասնում են օգնութեան, բայց և այնպէս կարիքը աւելի մեծ է։

Այս օրերս տեղիս առաջին կարգի վաճառական Յակովը Մաղլումեանը մի գեղեցիկ և մարդասէր գործ կատարեց, որը արժանի է տեղիս հայ համայնքի խորին շնորհակալութեանը։ Իր անուանակոչութեան օրը, փոխանակ ճոխ սեղանի նուիրեց՝ հայոց եկ.-ծխական ուսումնարանի չքաւոր աշակերտ - աշակերտուհիների՝ կօշիկների կրկնակօշիկների և նախաճաշի համար 150 րուբլի։ Բացի սրանից՝ իր դստեր պսակադրութեան օրը, փոխանակ շքեղ և փառաւոր հարսանիքի՝ նուիրեց տեղիս չքաւոր հայ ընտանիքներին 120 ր., դեռ այստեղ չեմ յիշում մի քանի կարօտ ընտանիքների, որոնց 20—30-ական րուբլի բաժանեց։

Ահա իսկապէս մի օրինակելի և համակրելի գործ։

Բաղիկ

Գանձակ, 22 յունվարի

Ներքին գործերի մինիստրութեան առանձին յանձնարարութեամբ պաշտօնեայ Ա. Վ. Պետրովը ժամանելով Գանձակ, երէկ, ամսիս 21-ին փոխանորդ Լևոն վարդապետի ուղեկցութեամբ այցելեց քաղաքիս հայոց ծխական դպրոցները և ներկայ եղաւ ռուսաց լեզուի դասերին. ինչպէս ասում են գոհ է մնացել, իսկ ս. Լուսաւորիչ եկեղեցու բակում Նիկիտ Աֆանասեանցի հաշւով կառուցված 33,000 ր. արժեցող դպրոցի շէնքի համար իր հիացմունքն է յայտնել և գովել բարերարի օրինակելի գործը։

Ա. Վ. Պետրովի ցանկութեամբ երէկ երեկ. ժամը 5-ին, յաջորդարան էին հրաւիրված մօտ 30 հոգի պատուաւոր քաղաքացիներ և հոգևորականներից 7 հոգի. ժամը 6-ի մօտ, Պետրովը իր աստիճանաւորի հետ եկաւ յաջորդարան. ժողովականներին բարևելով, ներկայ եղողները ևս բռնեցին իրանց տեղերը։

Շօշափվեցին տնտեսական, ուսումնական և այլ զանազան հարցեր. հենց սկզբից ցանկացաւ իմանալ կաթողիկոսական թեկնածուների մասին ժողովականների կարծիքը. հարկային տեսուչ Աղաջան Սահակեանը, որ բոլոր հարցերին ցանկալի պատասխաններն է տալիս, առարկեց, որ մեր ցանկութիւնը այս կամ այն եպիսկոպոսի ընտրութեան մասին առանձին նշանակութիւն չունի, քանի որ Գանձակը իր ընտրութեան քուէն ոչ թէ ուղղակի էջմիածնումն է տալիս, այլ Թիֆլիսում թեմական պատգամաւորի ընտրութեան միջոցին, թող թէ միւս կողմից ևս վաղ է այդ մասին մտածելը, քանի որ Պոլօժենիէի հիման վրա մի տարի դեռ պիտի սպասել. ցանկութիւն յայտնեց մօտ ապագայում այդ յօդուածի փոփոխութիւնը։

Ժողովում հարց եղաւ և գիւղատնտեսական դպրոց ունենալու մասին Գանձակում։

Ա. Վ. Պետրովը առհասարակ շատ սիրալիր կերպով էր վերաբերվում և ժողովականներին առաջարկում՝ եթէ ունեն խնդիրներ թող առաջարկեն. նա յիշեց որ Թիֆլիսում խօսակցութիւններ է ունեցել Ա. Քալանթարի, Հ. Առաքելեանի, Ս. Յարութիւնեանցի և ուրիշների հետ։

Խօսակցութիւնը տևեց ուղիղ երկու ժամ

և ուխտող հոսանքի հետ սրբեց տարաւ և Մխիթարի փայփայած ժառանգութիւնը։

Անցեալ դարերի փառքից մնացել է այժմ միայն կիսաւեր և կատարելապէս ամայի վանքը առանց որևէ կալուածական սեփականութեան, առանց վանահօր, թողած ճակատագրի կամքին, անտէր և անխնամ, սակայն հարուստ անդարձ անցեալի ուրուականներով։

Տխուր աչքով ես նայում էի Տանձուտայ ձորի այն կուսական անտառների վրա, որոնք մի ժամանակ վանքի սեփականութիւն էին, իսկ այսօր նրանց տէրն և իշխողը պետական գանձարանն է. ինչ հարստութիւն ասես չէ կորցրել հայ ազգը և եկեղեցին դարերի ընթացքում...

Մխիթարի մահվանից յետոյ ժողովուրդը սկսեց ցրվել զանազան տեղեր և մի դար չանցած Տանձուտայ ձորը ամայացաւ իսպառ։

Միայն 50 տարի առաջ Շամշադինի և Ղազախի կողմերից գաղթում են այստեղ մի քանի գիւղացիք տնով-տեղով և հիմնում են վանքի մօտ նոր գիւղ՝ Գօշավանք անունով. այժմ այդ գիւղը 45—50 տուն ծուխ ունի և ապրում է հողագործութեամբ, անասնապահութեամբ և դրսի աշխատանքով։

Բայց ցաւն այն է, որ Գօշ Մխիթարի հովանու տակ ապաստանած գիւղը ամբողջովին անգրագէտ է...

Սկսած տանուտէրից մինչև վերջին գիւղացին ոչ ոք գիր-կարդալ չը գիտէ, ոչ հայերէն և ոչ ռուսերէն։

Բանից դուրս է գալիս, որ գիւղում մի նամակ կամ պաշտօնական ծանուցագիր ստանալու դէպքում յատուկ մի ձիաւոր է ուղարկվում Դիլիջան ստացված թուղթը կարդալու և նրա բովանդակութիւնը գիւղին յայտնելու համար...

Գիւղացիք այնչափ տգէտ են, որ գաղափար չունեն ընթացիկ ժամանակի ոչ տարեթւի և ոչ ամսաթւի մասին և երբ գիւղացուն ոստիկանական պրիստաւը կամ՝ դէպք է լինում՝ հաշտարար դատաւորը ամսի որոշ օրը կանչում են իրանց մօտ ծանուցագրով, գիւղացին այդ օրը չը շփոթելու համար ածում է գրպանը լոբի հատիկներով այնքան, որքան օր է մնում նրան մինչև պաշտօնեային ներկայանալը. այնուհետև ամեն օր իր գրպանից հանելով մի-մի հատ լոբի, նա այն օրը ձի է նստում և գնում կանչված տեղը, երբ գրպանում մնում է վերջին հատիկը....

Ինձ թւում էր, որ լսածս առասպելական կամ զաւեշտական պատմուածք է. ես դիմեցի հ. Զաքարիային հարցով, որը, աւաղ, հաստատեց գիւղացիների առասպելական տգիտութեան փաստը։

Այդ՝ Տանձուտայ ձորը, որ 750 տարի առաջ անմահ Մխիթարի օրով ուսման և լուսաւորութեան կենտրոն էր շրջակայ հայ ժողովրդի համար, այսօր ունի մի գիւղ, ուր ոչ մի գրագէտ մարդ չը կայ...

Չէ կարելի երևակայել աւելի ծանր հեգնանք Մեծ վարդապետի յիշատակին...

Այդ դժբաղդ գիւղի վրա ձեռնադրված քահանան էլ տարին 12 ամիս բացակայ է, ապրելով իր հայրենի գիւղում և այնտեղ սեփական հողի վրա գիւղատնտեսութեամբ պարապելով, ըստ որում գիւղական համայնքը իր հոգևոր պէտքերի համար ստիպված հրաւիրում է ամեն անգամ հարևան գիւղի քահանային։

— Աղա ջան, լսել ենք, որ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը դպրոցներ է պահում, ինչ լաւ կը լինէր, որ մի դպրոց էլ մեր գիւղում՝ բանայիք,—ասաց՝ դիմելով ինձ՝ գիւղի պատուաւորներից մէկը։

— Տասնեակ տարիներ ապրում էք լուսահոգի Մխիթարի վանքի մօտ և մինչև այժմ մի ուսումնարան չունէք. այդպէս էք պատւում մեծ մարդու յիշատակը. ամօթ է... Բարեգործական Ընկերութիւնը կարող է ձեզ միայն նպաստել, մնացածը դուք ինքներդ ձեր միջոցներով և աշխատանքով պիտի գլուխ բերէք։

— Գիւղը աղքատ է, միջոց չունի,—եղաւ հաւաքված գիւղացիների պատասխանը։

Որքան մեծ ծառայութիւն մատուցած կը լինէր այդ դժբաղդ և տգէտ ժողովրդին Քարվանսարայի տեղական վարչութիւնը, եթէ լուրջ ուշադրութիւն դարձնէր Գօշավանք գիւղի վրա, ուր այնպէս զգացվում է տարրական ուսման կարիքը և անհրաժեշտութիւնը, և նրա մասին մի համառօտ տեղեկագիր ներկայացնէր Թիֆլիսի կենտրոնական խորհրդին։

Ե. Սպենդիարեան

(Կը շարունակուի)

---

*) Սխալ է, Ազգային Ժողովը դեռ չէ կայացրել իր որոշումը։ «Մշակի» խմբ.

**) Սխալ է, տրվում են նաև Սուրէնեան և Սուքիաս արքեպիսկոպոսների և Մեսրոպ եպիսկոպոսի անունները։ «Մշակի» խմբ.

և ժամը 8-ին մնաք բարև ասելով ժողովականներին, հեռացաւ յաջորդարանից. մինչև իր կայարանը Ս. Վ. Պետրովին ուղեկցեց բժիշկ Վահան Արիբէկեանց։

Այսօր նա պիտի այցելէ Թիւրքաց դպրոցները, իսկ վաղը առաւօտեան կը թողնէ Գանձակը և կը ճանապարհվի դէպի Ղարաբաղի կողմերը։

Գանձակեցի

ԳԻՒՂԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ

Նեղ տենդէնցներով ապրելու և կէս դարուց աւելի մեր ամբողջ նիւթական և մտաւոր ոյժերը Թիւրքահայաստանին նուիրելուց յետոյ նոր-նոր միայն հայկական կեանքի իրականութեան մէջ սկսում են ճառագայթել խելացի կուլտուրական գործունէութեան նշոյլները։

Ութսունական թուականներից սկսած մեր մտածմունքն ու նիւթական միջոցները կամ աղէտներ դարմանելու վրա էին վատնում և կամ եկեղեցական-տէրտէրական մեծ խնդիրներով էին զբաղված։ Զուտ կուլտուրական գործը կամ չէր առել, մեռել էր։

Աշխատող, հողագործ, հայրենիքին կպած և նրա յոյս ժողովուրդը անպաշտպան, ուսուցչից ու ղեկավարից զրկված, յուսահատ կանգնած իր ուժասպառ հողի ու կոտրած գութանի կողքին սովամահ չը լինելու համար փախչում էր հողից ու գիւղից, դիմում հեռաւոր քաղաքներ և պատմական Շիրակից անգամ փախչում Ամերիկա, իսկ մենք ազգ էինք փրկում, քահանայ և առաջնորդ ընտրում, դրա մէջ տեսնելով ազգի փրկութիւնը, նրա ապագան։

Ողորմելի հոգեբանութիւն։

Վերջապէս եղան հասկացողներ, ժողովրդի իսկական բարեկամներ, որոնք ըմբռնեցին մեր ամբողջ 50 տարվայ գործունէութեան սխալը և այժմս հանդէս են եկել բժշկելու հայ ազգ կոչված ծառի արմատը։ Նպատակ են դրել նորից վառել ժողովրդի մէջ սէրը դէպի հայրենի հողը, դէպի գիտութիւն՝ այդ հողից ստանալու նիւթական և բարոյական անկախ դրութիւնը և աշխատանքի խելացի եղանակների հետ ծանօթացնելով, մի անգամ ևս ուզում են ապացուցանել մոլորածներին, որ հողն է հարստութեան միակ եւ յաւիտենական աղբիւրը, որ մայր երկրին կպած եւ աշխատող մասսան է ազգը։

Եւ լեզուն, պատմութիւնը, դարերի ընթացքում մշակված աշխարհայեցողութիւնն ու գրականութիւնը բաւարար ուժեղ շաղախ են մի ժողովրդին իբրև ազգ իրար հետ կապելու և պահպանելու, եթէ նա չէ կտրված մայրենի հողից և նիւթապէս ու մտաւորապէս ստրկացած չէ դրացիներին։

Ասում ենք, որ 50 տարի կորցնելուց յետոյ, այժմս նոր-նոր ենք սկսել ըմբռնել հայ ժողովրդի փրկութեան միակ ուղիղ ճանապարհը և այդ ուղղութեամբ սկսված գործունէութեան առաջին ճառագայթները պայծառ են և յուսալի։ Հանգուցեալ Ժամհարեանի կտակը և նրա եղբայրների օրինակելի վճիռը, Խալաշեանի 100,000 ր. նուէրը, Պետերբուրգի եկեղեցական խորհրդի որոշումը գիւղատնտեսական գիտութիւններ տարածելու մասին ժողովրդի մէջ, մեզանում ևս Հայ Գիւղատնտ. և Տնայնագործական Ընկերութեան սկիզբը և նրա նպատակը այնպիսի մխիթարական երևոյթ են ներկայացնում, որ նրանց վրա միայն կարողանում է հանգիստ գտնել ժողովրդասէր տանջվող սիրտը։

50 տարի բառերով ու ազգային հառաչներով մեր ժողովրդի սիրտը չորացնելուց յետոյ, նոր ենք սկսում մօտենալ նրա իսկական վէրքերին և փորձում դնել ժամանակակից խելացի սպեղանին։

Ես չեմ կասկածում, որ գործի գլուխ անցած փորձառու ձեռքերը կը կարողանան աջողութեամբ պսակել սկսվող գործը և մենք շուտով կունենանք գիւղատնտեսական զանազան ճիւղերի վերաբերեալ դպրոցներ, գիւղատնտեսական դասընթացքներ, արհեստագիտական բաժանմունքներով երկդասեան ուսումնարաններ, գիւղական արհեստանոցներ և այլն։ Հաւատացած եմ, որ իւրաքանչիւր գաւառում մենք կունենանք գիւղատնտեսական ընկերութիւն՝ փոքրիկ փորձադաշտերով, երկրագործական կատարելագործված գործիքների պահեստներով, տնայնագործական իրերի վաճառանոցներով և թանգարան ցուցահանդէսներով, որովհետև այդ է փրկութեան և պատուաւոր գոյութեան միակ և ճշմարիտ ուղին, և այդ շաւղի վրա պիտի ծախսվի հայ հարուստի և ժողովրդի ինտելիգենտ բարեկամի կարողութիւնը։

Մենք և մեր ժողովուրդն այնքան ետ ենք մնացել Եւրոպայից և հարաւային Ռուսաստանի բնակիչներից, որ միայն եռանդուն և անքուն գործունէութեան շնորհիւ միայն կարող ենք վերադարձնել 50 տարիների ընթացքում աչքաթող արածն ու կորցրածը։

Վերջերս, Գանձակի նահանգում Խան-Ղարվենդ կոչված կալուածքի ջրաբաշխական պայմաններն ուսումնասիրելիս, ականատես եղայ, թէ ինչպէս Թուրք ու հայ մանրավաճառներ, իրանց անմիտ, կօշէկանոց առևտուրը թողած, եկել էին կալուածքի կառավարչի մօտ ու հող էին խնդրում կապալով՝ բամբակի մշակութեան համար, որը կանօնաւոր մշակութեամբ սկսել է 400—700 ր. զուտ արդիւնք տալ մի դեսեատին տարածութիւնից։

Խելացի օրինակն ու շուկայի աճող պահանջը վերածնել են սէր դէպի հողագործութիւն, սէր դէպի աշխատանք մայր երկրի ծոցում և յանցանք կը լինի, եթէ մենք խելացի օգնութեան չը հասնենք մեր ժողովրդին։

Մեզանից է կախված փախստականների վերադարձը դէպի իրանց մայրենի գիւղը, սիրող ու կենսալի մայրենի հողը։

Ո՞ր խելացի խնամողն է մնացել այդ գթասիրտ մօր կաթնալի կրծքի մօտ աղքատ ու ծարաւ։ Ի հարկէ ոչ ոք։

Բայց կան գիւղեր, որոնց հողը քչացել է, որոնք կարիք ունին նոր հողաբաժիններին, որոնք տրամադիր չեն փախչելու ու եռանդով կը սկսէին շարունակել սիրած հողագործութիւնը հայրենիքի բարեբեր կուրծքը մշակելով։ Իսկ այդ բանի համար հարկաւոր է հող ու կատարելագործված գործիքներ։ Ուժասպառ գիւղացին հնարաւորութիւն չունի այդ բոլորը միանգամից ձեռք բերելու։ Հարկաւոր է օգնութեան գալ նրան։ Հարկաւոր է հիմնել երկրագործական և հողային վարկի ընկերութիւն, հարկաւոր է հիմնել գիւղացիական հողային բանկ, որտեղից թէ համայնքներ և թէ առանձին անհատներ հնարաւորութիւն պէտք է ունենան թեթև %-ով դրամ ստանալու հարկաւոր հողաբաժիններ գնելու ու իրանց տնտեսութիւնները լաւացնելու համար։ Չէ՞ որ տարիների ընթացքում մեր մամուլը մեծ տեղ է տուել հայ ժողովրդի մարտիրոսագրութեանը վաշխառուների ձեռից. այժմս գործի անցնելու ժամանակ է և պէտք է, որ մենք էլ մի լաւ կազմակերպված հողային և երկրագործական գիւղական բանկ ունենանք դարձեալ հարկաւոր բաժանմունքներով՝ հարաւային Կովկասի բոլոր նահանգներում, և դա նոյնպիսի գեղեցիկ և մեծ գործ կը լինի, որքան մեծ է մեր ժողովրդին ժամանակակից երկրագործութիւն, գիւղատնտեսութիւն, տնայնագործութիւն ուսուցանելը։ Ժամանակ է ըմբռնել, որ այս միջոցները աւելի ամուր շաղախ են մեր ազգի պատուաւոր գոյութեան յարատևութեան և բարեկեցութեան, քան տիրացուական ցայսօր մեզ յայտնի միջոցները։

Հաւատացած եմ, որ հայ ազգի խելացի ֆինանսագէտները արձագանք կը տան այս առաջարկիս և նա իբրև «ձայն բարբառոյ յանապատի» չի անցնի անուշադիր և չի մնայ առանց գործադրութեան։

Գ. Մուրադեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կոմսուհի Ե. Ա. Վօրօնցօվա-Դաշկովայի նախագահութեամբ կազմած հանգանակիչ յանձնաժողովը մինչև օրս ժողովել է ընդամենը 6029 ր. 20 կոպէկ յօգուտ Թուրքեստանի երկրաշարժից վնասվածների։ Իսկ Պետերբուրգի կոմիտէտը հանգանակել է ցայսօր ընդամէնը 42,641 ր. 61 կ.։

◆ Կառավարական սենատը անհետևանք թողեց Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատարի բողոքը նահանգական ատեանի այն որոշման դէմ, որով բեկվեց քաղաքային դումայի կայացրած որոշումը՝ չը տալ գումար խուզարկու բաժանմունքի բնակարանի համար։ Սենատի բացատրութեան համաձայն, խուզարկու բաժանմունքները, 1908 թ. յուլիսի 6-ի օրէնքի ոյժով, կազմված են ոստիկանական վարչութիւնների թւում. իսկ գործող օրէնքին նայած, տեղական ոստիկանական վարչութեան համար բնակարան յատկացնելը լուսաւորութեամբ և վառելիքով ընկնում է քաղաքային ազգաբնակութեան վրա։

◆ Այս օրերս Պետերբուրգում վախճանվել է երբեմն հռչակաւոր երգիչ Դաւիդօվը (Կարապետեանց, Թիֆլիսեցի)։ Հանգուցեալը մեծ աջողութիւն ունէր օպերետներում և այսպէս կոչված «Գնչուական երգերում», նամանաւանդ 80-ական թւականներին։ Նրա երգած „Пара Гнѣдыхъ"-ը ժողովրդական էր դարձել։ Հանգուցեալը երիտասարդական հասակում երգիչ է եղել Մօսկվայի հայոց եկեղեցում։

◆ Մի խումբ իրաւասուներ Թիֆլիսի քաղաքային վարչութեան չորրորդ անդամի պաշտօնի համար տալիս են Ս. Ֆիշէրի և Նեպլինցէվի անունները։ Սանիտարական-բժշկական տեսուչ Կար. Ստեփանեան հրաժարվեց դնել իր թեկնածութիւնը։

◆ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը քաղաքային վարչութեան միջոցով դումայից թոյլտւութիւն է խնդրում դպրոցի նորակառոյց շէնքի մօտի փողոցներից մինը անուանել հանգուցեալ կաթողիկոս Իզմիրլեանի անունով։

◆ Մտադրութիւն կայ Ներսիսեան դպրոցապատկան հին շինութիւնը Սոլդատսկի բազարում քանդել և այդ տեղում կառուցել պասաժ խանութներով ու կրպակներով։

◆ Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեան առաջարկում է Սոլդատսկի բազարի ձկնավաճառների համար տեղ յատկացնել Ներսիսեան դպրոցի նորակառոյց շուկայի բակում կամ Մուխրանեան կամուրջի մօտ։

◆ Թիֆլիս եկաւ դատաստանական պալատի աւագ նախագահ նոր նշանակված Լագօդան։ Երէկ Թիֆլիսի նահանգական դատարանի բոլոր պաշտօնեաները ներկայացան իրանց նոր մեծաւորին։

◆ Շուտով դումայի քննութեանը կառաջարկվի ոստիկանապետի առաջարկութիւնը Նախալովկայում հրդեհաշէջների կայարան հաստատելու մասին։

◆ Նիցցայից «Каспій»-ին հեռագրում են, որ այնտեղ երևաց ռուս օդագնաց Էրիստօվ, որ իրան անուանել է աֆիշաներում «ուրագանի թագաւոր», ժողովելով փողեր՝ «ուրագանի արքան» փախել է։

◆ Այսօր կովկասեան բժշկական ընկերութեան շինութեան մէջ նշանակված է կանանց ընկերութեան ընդհանուր ժողովը։

◆ Շաբաթ օրը, յունվարի 29-ին Թիֆլիսի հասարակական կլուբում տեղի կունենայ ներկայացում։ Յետոյ կը քննվի կլուբի անցեալ տարվայ գործունէութեան հաշիւը, կը հաստատվեն նոր անդամները և այլն։

◆ Յունվարի 24-ին կայացաւ ժողովրդական համալսարանի ընկերութեան վարչութեան հերթական նիստը, ուր որոշվեց ի միջի այլոց փետրվարի 19-ին դասախօսութիւն կազմակերպել Ժողովրդական Տանը գիւղացիների ճորտութիւնից ազատագրվելու 50 ամեակի առիթով։ Այդ օրը կը լինի նաև երաժշտական բաժին։

◆ Երգչուհի Վան-Բրանդը համաձայնեց փետրվարի սկիզբներին հանդէս գալ ժողովրդական Տանը։ Տոմսակները վաճառվում են բացառապէս բանւորներին, այն էլ իւրաքանչիւր գնողը իրաւունք ունի ձեռք բերել միայն մի տոմսակ։

◆ Այսօր Էյխէնվալդի օպերային խմբի աչքի ընկնող ոյժերից մինը՝ արտիստ Մօզժուխինը Արքունական թատրոնում նշանակել է իր բենեֆիսը։ Կը ներկայացվի «Ռուսալկա» օպերան։

◆ Մօսկվայում ներկայումս տեղի ունի երկաթուղային բժիշկների համագումարը, որի նախագահ ընտրվել է անդրկովկասեան երկաթուղիների գլխաւոր բժիշկ Միխայլովը։ Համագումարի յունվարի 20-ի նիստը նուիրված է եղել այն զեկուցումներին, որոնք ծրագրում են երկաթուղային ծառայողների առողջութեան պահպանելու մի շարք միջոցներ։ Նիստում ի թիւս այլոց կարդացվել է բժ. Ն. Ա. Խուդադովի զեկուցումը «Անդրկովկասեան երկաթուղու շրջանում լեռնային սանատօրիա հիմնելու մասին»։ Զեկուցանողը պաշտպանել է այն միտքը, որ սանատօրիայի ամենալաւ տեղը՝ Բակուրիանումն է (Բորժոմի մօտ), որը իր ամենալաւ դիրքով ստեղծված է այդ տեսակ բուժարանի համար։

◆ «Эрив. В.»-ը յայտնում է, որ Երևանում ցրտերը շարունակվում են, իսկ խեղճ ազգաբնակութիւնը սառչում է իրանց բնակարաններում։

◆ Բագուից Բօեարսկիի դրամ. խումբը բանակցութիւններ է վարում Երևանի Ջանփոլադեանի թատրոնի հետ։

◆ Վրիպակ.—«Մշակի» երէկվայ համարում սպրդել է մի սխալ։ «Օրվայ նորութիւններ» բաժնում Լիէժի համալսարանի ուսանողների ցոյցի վերաբերմամբ ասված է՝ «որովհետև մի ռուս ուսանող բացակայ էր», պիտի լինէր «որովհետև ներկայ էր»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Թիֆլիսի նահանգապետի որոշմամբ Մովսէս Ժիվան անցորդների ետևից սիրաբանելու համար ենթարկվում է 50 ր. տուգանքի կամ մի ամսով բանտարկութեան. Իվան Միխայլովը պաշտօնեայի զգեստ առանց թոյլտւութեան կրելու համար 50 ր. տուգանքի, Վասիլի Խարաբաձէն և Կօնստանդին Գէօրգաձէն պանդոկներում աշակերտութեանը մուտք թոյլ տալու համար 50-ական ր. տուգանքի, Իվան Կիրվեակօվ, Պեօտր Բերիձէն և Ալի Ալի-Ղուրբան-օղլին ոստիկանութեան պաշտօնեաներին վիրաւորելու համար առաջինը 50 ր., վերջինները 25-ական րուբլի տուգանքի. Սարգիս Նազարեանը, Դմիտրի Ջափարիձէ, Դարչօ Դիւլանօվ, Դաւիթ Իորիէվ, Յովհաննէս Խաչատրեան և Իվան Ջանգուլաշվիլին միսը սակագնից աւելի վաճառելու համար 25-ական րուբլի տուգանքի, իսկ Դիվանօվը 50 րուբլի։

◆ Յունվարի 25-ին Աւճալսկայա փողոցում Նինա Ցիկվաձէն գտել է մօտ 2 շաբաթական տղայ երեխայ։

◆ Յունվարի 25-ին, երեկոյեան ժամը 8-ին, Թիֆլիսի նահանգական պետական գանձատան շինութեան մէջ ատրճանակով ինքնասպանութիւն գործեց անյայտ պատճառներով պաշտօնեայ Նիկօլայ Պաւլօվը։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Արսէն Տէրտէրեանի. «Վահան Տէրեան. Ցնորքի, ծարաւի և հաշտութեան երգիչը»։ 1910 թ., էջ 105.

Վահան Տէրեանի «Մթնշաղի անուրջները» խորագրով բանաստեղծութիւնների ժողովածուն մեր մամուլի ուշադրութիւնը գրաւեց շնորհիւ այն հանգամանքի, որ նրա անպաճոյճ տողերից թարմութիւն էր բուրում, կայծեր են երևում, որոնք կարող են ապագայում բոցավառվել, եթէ, ի հարկէ, այրէջ նիւթին փթթանք չը փոխարինէ։ Մեր այս նոր բանաստեղծի մասին թէր և դէմ կարծիքներ եղան, բայց ի հարկէ, վերջնական հաստատ խօսք ասողը, եզրափակողը պիտի լինէր բանաստեղծի ապագայ դրական գործունէութեան բնոյթը, քանակը, թափն ու որակը։ Սակայն մարգարէանալու տենչով բռնուածներից մէկը չէ բաւականացել սկսնակի նկատմամբ ուրիշների արած նկատողութիւններից և ակնարկներից, ընդարձակ ուսումնասիրութեամբ է հանդէս եկել իր վերև յիշված գրքոյկով։

Տէրտէրեանի գրքոյկի բովանդակութիւնը պարփակված է 33 էջի մէջ, որովհետև գրքոյկի մնացեալ 72 էջերը իրավանն աշխատած և մտածած ընդհանուր տեսութիւն է, որը, դժբաղդաբար, քննադատի անձեռնհասութիւնն է ցոյց տալիս,—խճողած մտքեր, անկապ և աւելորդ վկայութիւններ, անճոռնի լեզու, յանդուգն և համարձակ ոճ, բայց բոբիկութիւն... Նա հրաւիրում է լինել ծանօթ հին և նոր գրականութեան, հին և նոր փիլիսօփայութեան—Անակրէօն, Շէքսպիր, Հայնէ, Շիլլեր, Մետերլինկ, Նիցշէ, Կանտ, Տուրգենէվ, Տօլստոյ մինչև իսկ Ովսեանիկօ-Կուլիկովսկին, Կոգանին, էլ չենք ասում մեր հայ գրողներին, որոնք տեղեակ պիտի լինեն իրաւագիտութեան. պրոֆ. Պետրաժիցկիի էմօցիաների թէօրիային և վերջապէս իրան Տէրտէրեանի ինքնալրացման, յուզական եւ անկոխ ապրումների թէօրիային, տոգորման մեթօդին և այլն։

Տէրտէրեանը մի գիւտ է արել մեր գրականութեան համար, որ երբ կայ Լէօ—Բերբերեան քննադատական մի շկօլա (բայց Բերբերեանը իբրև Լէօի աշակերտ), որին պատկանում են և Տէրեանի քննադատները, որոնց թւում և տողերիս գրողն է, և հիացած իր գիւտով, հեգնում է, ծաղրում, որ մեղպէնները համարձակվել են ասպարէզ իջնել, երևի, իրան «յուզական ապրումներին» անտեղեակ։

Քննադատը անհրաժեշտութիւն է զգացել բացատրելու (sic) «դոնքիշօտական, համլէտական և բէալիստական կառուցուածքները», համապատասխանելով նրանց լիրիկական «պսիխիկաներն» երեք կարգի—Անակրէօնական էրօտիկա, համաշխարհային վշտերգում, նիցշէական կենսահայեցողութիւն և գտել է, որ Տէրեանի մէջ գծեր կան այդ երեք պսիխիկաներից ևս, բայց նրան ամբողջականօրէն կապել այս կամ պսիխիկային՝ հնարաւորութիւն չը կայ» (72)։ Սարը յղացել, մուկ է ծնել. այդքան շփոթ, աղմուկ, բարձրագոչ հասկացողութիւններ և համապատասխանող ոչնչութիւն։ Եւ այսպիսի եզրակացութեան եկող քննադատը բարեհաճել է հայհոյել ինձ, որովհետև ես ասած եմ եղել, որ Տէրեանը շեշտող գաղափարի է, առանց ընդգծած ուղիի, այսինքն դեռ անկերպարան վիճակի մէջ է («Մշակ» 1910 թ. № 162)։

Ցաւն այն չէ, որ անտեղի յարձակումներ են լինում, և բռնազբօսիկ կերպով մարդկանց այս կամ այն շկօլային պատկանել տալիս և հայհոյում, այլ այն, որ Տէրտէրեանի նմանները են փչացնում նորեկ շնորհալի բանաստեղծներին, շեղում նրանց այն ճանապարհից, որով ընդունակ են նրանք առաջ գնալու, ինչպէս շեղեցին համեստ բանաստեղծուհի Կուրղինեանին, ձգելով նրան իրան հոգուն անծանօթ և խառնուածքին անհամապատասխան մի վայր—մեքենաների աշխարհը, ձուլարանները։ Անյաջող պատուաստ էր այդ, ի հարկէ նիւթը չորանալու վտանգին ենթարկած։

Տէրտէրեանի գրուածքը ոչ միայն անաջող կարելի է համարել, այլ և վնասակար բանաստեղծի համար, եթէ միայն վերջին «ցնորքի, ծարաւի և հաշտութեան երգիչ» մեծադղորդ կոչումները, որոնց մասին ոչ երազել և ոչ էլ մտածել է, որպէս ճշմարտութիւն ընդունէ և նրանցով հրճվի, իր առաքելութիւնը վերջացած համարելով։

Քննադատի լեզուն անճոռնի համարելու նկատմամբ անարդարացի չը լինելու համար, բերենք շատերից մի երկու օրինակ.—«Խնդիրը վերացականութեան սահմաններում անհասկանալիութեան վտանգին չենթարկելու համար հարկաւոր է իրապէս գեղագէտների ստեղծագործութեան վերլուծումով հիմնաւորել տեսական պնդումները». «մենք պէտք է ապացուցանենք քննական մեթօդի սխալները, ուրիշ խօսքով՝ հրապարակախօսութեան անկիրառելիութիւնը գեղարուեստի բնագաւառում»։ «Մի օրինակով թանձրացնենք մեր ասածները», և այլն։

Դժուար թէ հայ գրողը այսպիսի այլանդակ կազմութեամբ, նախադասութիւններով իր միտքն արտայայտի, եթէ նա բառացի թարգմանութիւն չէ անում, կամ չէ աշխատում իր գրուածքը խրթին դարձնել մահկանացուներիս անհասկանալի անելու համար։ Երկու դէպքում էլ պախարակելի է։

Ա. Տէր-Յարութիւնեան

Նոր-Նախիջևան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, յունվարի 25-ին Ռուսաց Դրամատիկական արտիստների խումբը Արտիստական թատրոնում ներկայացրեց Հէնրիխ Զուդերմանի «Սօդոմի կործանումը» դրաման, արտիստ Մուրօմցէվի բենեֆիսին։

Տաղանդաւոր դերասանի բենեֆիսը գրավել էր թատրոն հասարակութեան խուռն բազմութիւն։ Վիլլիի խոր հոգեբանական դերը Մուրօմցէվը տարաւ մեծ հմտութեամբ և կարողացաւ գրեթէ հմայել ամբողջ հանդիսականներին։

Մուրօմցէվը ստացաւ մի քանի ընծաներ և բուռն ծափահարութիւններ։ Հ. Ս.

—

Ջալթը (Ն. Նախիջևանի գ.), 17 յունվ.

Ամսիս 16-ին, կիրակի օրը գիւղիս երկդասեան տղ. դպրոցում տեղի ունեցաւ մի ներկայացում. դրված էր Գ. Սունդուկեանցի «Պէպօն» մեր բարբառի վերածած։ Այս երկրորդ անգամն է, որ ծերունազարդ դրամատուրգի յայտնի «Պէպօն» բեմ է դուրս գալիս մեր խաւար գիւղացիութեան առաջ և մեր գիւղացին, որ իր սեփական աչքերով տեսնում է բեմի վրա առօրեայ կեանքում յաճախ կրկնվող տխուր իրականութեան պատկերն, անսահման լարված ուշադրութեամբ նայում է դէպի այն։ Այս ներկայացմանն ևս ինչպէս անցեալ անգամ էլ մուտքը ձրի էր. բայց չը նայած այդ յարմարութեան սպասվածից պակաս հանդիսականներ կային։ Իսկ ինչ վերաբերվում է դերակատարներին, բացառութեամբ մէկի, մնացածներն ուսուցիչ-ուսուցչուհիներ էին. բայց պէտք է նկատել, որ դերերի անյարմար բաշխումն այս անգամ ևս զգալի կերպով նկատվում էր։ Ընդհանուր անսամբլին խանգարում էր նաև յուշարարն իր բարձր ու կոշտ ձայնով, մանաւանդ այն ժամանակ, երբ նա խօսքեր չէր կարողանում հասցնել դերակատարներին, որով և պատճառ էր դառնում վերջիններիս անշարժ մնալուն։ Սակայն, ի նկատի ունենալով այս բոլոր թերութիւնները, այնուամենայնիւ գովելի քայլ է արածը և քաղցր է յուսալ, որ հետևեալ անգամներին դերակատարներն աւելի յարմար դերերով և աւելի պատրաստված բեմ դուրս կը գան։ Ցանկալի է, որ նման ներկայացումների հետ յաճախ կրկնէին նաև ծնողական ժողովներ և երեկոյթներ, որով գիւղացու մտաւոր ընդարձակման մեծ զարկ կը տրվէր։

Իքս-Իգռեկեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ՊԱԼԱՔԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՄԵՐԿԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

«Դատարկաբան» և «զրախօս» Պալաքեան վարդապետը Պօլսում յայտարարել է ի միջի այլոց, և այդ յայտարարութիւնների արձագանքները ռուսահայ մամուլի մէջ էլ երևացան, իբր թէ ես իբրև «Արարատի» խմբագրապետ (որ երբէք եղած չեմ) կասկած եմ յայտնել իրան՝ Պալաքեանին հանգուցեալ Հայրապետի մասին, «Արարատի» 1909 թ. յուլիս-օգոստոս համարները ցենզուրայի վարչութեան հրամանով գրաւվելու առիթով, թէ նա կարող է ինձ կառավարութեան ձեռքը մատնել, եթէ ես նրա մօտ մի համար «Արարատ» թողնեմ։

Սրանով կտրականապէս յայտնում եմ, որ այդ խնդրի մասին ես ոչ մի խօսակցութիւն չեմ ունեցել յիշեալ վարդապետի հետ։ Ցենզուրային վարչութեան հեռագրական պահանջը ես զեկուցել եմ անձամբ Նորին Վեհափառութեան և ինչ որ պէտք էր, ասել եմ իրան միայն, առանց որևէ կասկած յայտնելու։

Կասկածի կամ անվստահութեան խնդիր դէպի հանգուցեալ Հայրապետը իմ կողմից այս դէպքում ամենևին լինել չէ կարող։ Իբրև տպարանի տեսուչ և նահանգապետի կողմից հաստատված «պատասխանատու անձն» տպարանի, ես պարտաւոր էի անյապաղ և ճշդութեամբ կատարել ցենզուրային վարչութեան պահանջը։ «Արարատի» խմբագիր Մատթէոս վարդապետի առաջարկութեանն համակերպելով՝ ցենզուրային վարչութիւնն ապա թոյլատրեց ուղարկել «Արարատի» այդ համարը բաժանորդներին, պահանջելով նախապէս, որ կտրվեն և իրան ուղարկվեն բռնված համարից անթոյլատրելի 4 երեսները բոլոր տպված օրինակների միջից։ Այդ այն երեսներն էին, ուր տպված էր Վեհափառի խօսակցութիւնը Նորին Կայսերական Մեծութեան՝ Թագաւոր Կայսեր հետ։ Այն ինչ ցենզուրական օրէնքով Կայսեր և Կայսերական տան անդամների բերանացի խօսակցութիւնները տպել կարելի է միայն պալատի մինիստրի ստորագրութիւնն ունենալուց յետոյ։

Այս է բոլորը։ Պալաքեան վարդապետը որևէ առիթով չէր յանդգնի ինձ մօտ Օրմանեան սրբազանի հասցէին որևէ անարգական արտայայտութիւն թոյլ տալ, այդ էլ ակնյայտնի կը լինի ինձ և նրան ճանաչողների համար։ Այդ այն Պալաքեան վարդապետն է, որ կաթողիկոսական ընտրութեան նախօրեակին Յուսիկ վարդապետ Ջոհրաբեանցի սենեակում այնպէս գովաբանեց Օրմանեան սրբազանին, որ Շամախու թեմի պատգամաւոր Ստեփան Թաղիանոսեանն ի լուր բոլորի յայտարարեց. «Եթէ մինչև այժմ կասկածում էի, թէ պէտք է ձայն տալ Օրմանեանին թէ ոչ, այժմ՝ այս վարդապետի ներբողական կարծիքները նրա մասին լսելուց յետոյ, այլ ես չեմ կասկածում, և որոշում եմ անպատճառ նրան ձայն տալ»։ Ասածիս ճշմարտութիւնը վկայել կարող են Թաղիանոսեան, Գէորգ Զուբար (Բեսարաբիայի պատգամաւոր), Յուսիկ վարդապետ Ջոհրաբեանց, Մուշէ վարդապետ և ուրիշներ։

Երուանդ Տէր-Մինասեան

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Վան, 10 յունվարի

Պատրիարք Դուրեանի շուրջ երևան եկած երկպառակութիւնները ու ցաւալի անմիաբանութիւնները, սկանդալները Կ. Պօլսում, բարեբաղդաբար գաւառական քաղաքներում արձագանք չեն գտնում, նոյնպէս և Վանում, ուր կեանքը ընթանում է նորմալ ընթացքով։ Ոչ միայն չենք հետա քրքրվում, այլ նաև ծիծաղում ենք մայրաքաղաքացիների վրա, որոնք խաղալիք են դարձել մի քանի Թայֆայականների ձեռքում, որոնց մենք տեսանք Վանումն էլ։ Մտածում ենք թէ Կ. Պոլսեցիները արժանի խեղճ են եղել, որ իրանց ազգային գործերը, իրանց պատրիարքն ու վարչութիւնը խաղալիք են դարձրել սին վէճերի ու շարլատանութիւնների։

Եթէ գաւառը չէ հետաքրքրվում այդ ունայն վէճերով, բայց գոնէ գաւառի գործերը ակամայ կրում են նրանց ազդեցութիւնը. օրինակ՝ գաւառները մնում են առանց առաջնորդի, ազգ. ժողովներ կորցնում են իրանց գոյութիւնը ու բացակայում է օրէնքի գործադրութիւնը ու դրանց հետևանքով էլ ազգային գործերը կաղում են։

Օրինակ՝ հայերի զինուորագրութեան հարցը ստացել է այժմ մի սուր կերպարանք. հայերը զզվում են զինուորութիւնից ու դասալիք են լինում. այդպիսի դասալիքների շարանները արդէն Մուշից քաղաքս վերադարձան ու սոսկալի բաներ են պատմում այնտեղի զօրանոցային դրութեան մասին։ Տիֆ հիւանդութիւնը անհելի կոտորածներ է անում այնտեղ. զինուորների քառորդ մասը զոհ է գնացել տիֆին ու նոյնչափն էլ հիւանդ ընկել է. իսկ չը կան դարմաններ, չը կան կանոնաւոր հիւանդանոցներ, բժիշկներ, իսկ առողջապահական դրութիւնը արդէն ողբալի է։ Առողջ զինուորներին պառկեցնում են հիւանդների անկողիններում, հիւանդներին մեռնողների անկողիններում և երբ զինուորները դժկամակում են, նրանց ծեծում են։ Ահա այս տեսակ վանդալութիւնների պատճառով վանեցի զինուորները, որոնք գտնվում էին Մուշի զօրանոցում, փախել եկել են քաղաքս և էլ չեն ուզում վերադառնալ այդ դժոխք—տանջարանները, ուր նրանցն էլ սպասում է մահը, որոնք գանգատվում են նոյնպէս իրանց ընկերակիցների ու էնթասպաների կոպիտ վերաբերմունքից դէպի իրանք, զհավուր, քեաֆէր և այլն. տգեղ ածականներ սովորաբար տրվում են հայ զինուորներին, հայհոյանքներն էլ պակաս չեն լինում, որոնք վիրաւորում են հայերի ազգային ու կրօնական զգացումները։

Սրանց օրինակով գանգատներ անում են նոյնպէս Վանում ապրող հայ զինուորները, որոնք գլխաւորապէս մշեցիներ են, բայց ոչ ի հարկէ նոյն չափով։ Սրանց գանգատը այն է ընդհանրապէս, որ էնթասպաները խտրութիւն են անում հայ և թիւրք զինուորների միջև, հայերին աւելի ծանր ծառայութիւնների են պարտաւորեցնում, սովորականից աւելի պահակ են կանգնեցնում, կերակուրները կանեցուցիչ են և այլն։

Այս և սրանց նման պատմութիւններ, շրջան են անում ժողովրդեան բերաններում և խրտնեցնում են առանց այն էլ արդէն զինուորական կեանքին անվարժ ժողովրդին, որ զանազան հնարքներ է գործ դնում զինուորութիւնից զերծ մնալու համար։ Սրանք ուշադրութեան արժանի խնդիրներ են, իսկ ազգ. պատրիարքարանը փոխանակ ուշք դարձնելու այս կարևոր խնդրի վրա և զինուորութեան պայմանները դիւրացնելու, զբաղված է ներկայ վէճերով։

Վանի ժողովուրդը Նոր-Տարիի և Ծննդեան տօների առիթով ջերմ հիւրասիրութիւն ցոյց տուեց քաղաքումս բնակվող հայ և առհասարակ քրիստոնեայ զինուորներին։ Նոր-Տարիի առաւօտ քաղաքի Ցիսուեան վարժարանում սարքվել էր մի հանդէս հայ զինուորների համար. խօսվեցին ճառեր ու մրգեր բաժնվեցին նրանց։ Միևնոյն կերպով հանդէսներ սարքվեցին Ծննդեան Ճրագալոյցի երեկոյեան ու յունվարի 6-ի առաւօտը քաղաքի զանազան թաղերում, ուր հայ զինուորներ եկեղեցի էին եկել իրանց հոգևոր պարտականութիւնը կատարելու։ Առաւօտ ու երեկոյ նրանց տրվեցին ճաշեր գլխաւորապէս առաջնորդարանում, ուր զինուորական նուագարանի ընկերակցութեամբ ճաշ տրվեց զինուորներին, որը իր ներկայութեամբ պատւել էր զինուորական հրամանատարը բարձրաստիճան սպաների ընկերակցութեամբ։ Խօսվեցին ճառեր և կոչ եղաւ հայ զինուորներին անթերի կատարելու իրանց պարտքը դէպի հայրենիք։ Լաւ, բայց բանը սրանով չէ վերջանում, հարկ է ուշք դարձնել նրանց գանգատներին, եթէ ոչ էլ հայ զինուոր չենք ունենայ։

Մորակ

ԹԱԳԱՒՈՐԻ ԴԱՏԸ ԺՈՒՐՆԱԼԻՍՏԻ ԴԷՄ

Լոնդոն.—Գէորգ Թագաւորի դատը ժուրնալիստ Միլիւսի դէմ յարուցեց հասարակութեան մէջ մեծ հետաքրքրութիւն։ Բազմաթիւ մարդիկ աշխատում էին ներկայ լինել դատավարութեան։ Դատարանի դահլիճը լի էր։

Թագաւորի կողմից հանդէս եկան գեներալ սըր Ռուֆուս և գեն. սըր Ջօն Սայմօն։

Ներկայ էր մինիստր Ուինստօն Չէրչիլը։

Մեղադրվող ժուրնալիստ Միլիուսը երիտասարդ է, համեստ արտաքինով։

Մեղադրվողը պաշտպանում է ինքն իրան Գեներալ Ռուֆուս, արտասանեց երկար ճառ, որի սկզբում մատնանշեց, որ Թագաւորը հնարաւորութիւն չունէր դատարան գալ անձամբ իբրև վկայ։

Դիմելով գործի իրական կողմին, գեներալը ասաց, որ «The Liberator» թերթը Պարիզում հրատարակվում է ամերիկացի Ջէմս Խօլլէի ձեռքով, որ ծանօթացաւ մեղադրվող Միլիւսի հետ հնդիկ Կրիշնավարմի միջոցով։ Միլիւսը թերթի ներկայացուցիչ է Լօնդոնում։

Գեներալի ասելով, նա ոչինչ դէմ չունի Միլիւսի հանրապետական գաղափարների դէմ, որովհետև Անգլիան ազատ երկիր է։ Միլիւսը պատասխանատւութեան է ենթարկվում ոչ դրա համար։ Նա, ըստ երևոյթին՝ հանդիսանում է երեք յօդուածների հեղինակ, որոնց մէջ նա ասում է, թէ թագաւորը երկու կին ունի։

Միլիւսի մօտ գտնված նամակի հիման վրա կարելի է ենթադրել, որ նա, յիրաւի, որոնում էր, բայց չը գտաւ փաստեր, որոնք հաստատէին թագաւորի երկկնութիւնը։

Մեղադրող գեներալի ասելով, Գէորգ թագաւորը Մալտա կղզում 1910 թւին չէ եղել և հետևաբար չէր կարող ամուսնանալ ծովակալ Սէյմուրի դստեր հետ։ Մալտա կղզու մետրիկական գրքերում բոլորովին յիշատակութիւն չը կայ այդ անունով ամուսնութեան մասին։

Ծովակալ Սէյմուրը ունէր երկու աղջիկ, նրանցից մէկը մեռաւ օրիորդ ժամանակ և նա երբեք չէ պատահել թագաւորին։ Միւսը անգլիական զօրքի օֆիցեր Նեպիրի կինն է։

Այս աղջիկը թագաւորի հետ հանդիպել է երկու անգամ։ Առաջին անգամ երբ ութ տարեկան էր, և երկրորդ անգամ՝ լորդ Սպենսէրի ընդունելութեան ժամանակ։

Իբրև վկաներ կանչված ծովակալ Սէյմուրը, նրա աղջիկը և որդին հաստատեցին գեներալի յայտարարութիւնը։

Մեղադրվող Միլիւսը շարունակ լռում է։

Երդուեալ ատենակալները Միլիւսին ճանաչեցին մեղաւոր մեղադրանքի բոլոր կէտերում։ Դատարանը նրան դատապարտեց մի տարով բանտարկութեան։

Դատավճիռը յայտնի լինելուց յետոյ, գեներալ Ռուֆուս թագաւորի անունից յայտնեց, որ նա երբէք ոչ ոքի հետ չէ ամուսնացել, բացի թագուհի Մէրիից։ Թագաւորը ցանկանում էր անձամբ գալ դատարան, որպէսզի երդումով հաստատէ իր ցուցմունքները, և չեկաւ միայն զիջելով իւրայինների խորհուրդներին՝ չը ցանկանալով խախտել երկրի օրէնքները։

ԹԻՒՐՔԵՐԸ ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հեռագիրը արդէն լուր բերեց Պարիզից, որ պատգամաւոր Դելաէն հարցապնդում ուղղեց պարլամենտում ռուսական զօրքերը գերմանական սահմանից յետ կանչելու առիթով, որպիսի կարգադրութիւնը հարցապնդողի կարծիքով հանդիսանում է խախտումն ֆրանս-ռուսական դաշնակցութեան։ Այդ տեղեկութիւնը թիւրքական քաղաքական շրջաններում թողեց արտաքոյ կարգի տպաւորութիւն։ «Р. Сл.»-ի թղթակցի հետ խօսելիս մի տեղեակ անձն, որ լաւ ծանօթ է ղեկավար երիտասարդ-թիւրքերի շրջանների տրամադրութեան ու կարծիքների հետ, այդ առիթով յայտնեց.

«Այդ տեղեկութիւնը, ի հարկէ, դեռ կարիք ունի ստուգութեան, սակայն, առհասարակ ռուս-գերմանական միութիւնը, որչափ որ նա վերաբերում է Եւրօպային և ոչ Թիւրքիային և Պարսկաստանին, Թիւրքերի համար սարսափելի չէ։ Պետրոս Մեծի նշանաւոր կտակի օրից Թիւրքերը սովորել են Ռուսաստանին համարել իրանց թշնամի։ Ռուսաստանի վերջին գործողութիւնները հաստատում են մեր երկիւղները։ Փոքր Ասիայում քաղաքական պահանջներ առաջադրելու նպատակով՝ տնտեսական նուաճումներով հող պատրաստելու իր բացարձակ ձգտումով Գերմանիան նոյնպէս առիթ էր տալիս անհանգստութեան։ Սակայն, ի նկատի ունենալով, որ գերմանական ու սլաւօնական շահերը Մերձաւոր Արևելքում միանգամայն հակամէտ են, Գերմանիան կարող էր Ռուսաստանի հետ միջադէպի ժամանակ հաշւի առնել Թիւրքիայի բարեկամութիւնը։ Ֆրանսիան միշտ վայելել է մեր համակրանքները։ Նրա ազդեցութիւնը Թիւրքիայում բարոյական, տնտեսական և ֆինանսական է անպայման։ Երբ մերձեցում լինի Թիւրքիայի և Գերմանիայի միջև, Թիւրքիան վերստին կարող է յոյս դնել Ֆրանսիայի աջակցութեան վրա, որը երբէք չի հաշտվի ռուս-գերմանական համաձայնութեան մտքի հետ, ինչ առիթով էլ որ լինի։ Անգլիան, որ թշնամի է Գերմանիային և Ֆրանսիայի հետ կապված է համաձայնութեամբ, նոյնպէս աւելի շուտ կարող է բարեկամութիւն որոնել Թիւրքիայի հետ։ Ընդհանուր առմամբ, եւրօպական պետութիւնների ստորաբաժանման դէպքում կը ստեղծվի այն դրութիւնը, որպիսին նախքան Ղրիմի պատերազմն էր, որովհետև Իտալիան այժմ ամբողջովին գտնվում է Անգլիայի ազդեցութեան տակ։ Ի հարկէ, Ռուսաստանի շահերի տեսակէտից նրա դաշնակցութիւնը Գերմանիայի հետ հանդիսանում է սպանիչ սխալ։ Այդ սխալը շահաւէտ է Թիւրքերի համար, և մենք կաշխատենք օգտվել ստեղծված դրութիւնից, Փոքր-Ասիայում ռուսական ու գերմանական պահանջներին ֆրանսիական և անգլիական ազդեցութիւն ներհակելու մտքով։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Բարֆրուշ, 15 յունվարի

Զահիր-Դովլէն այստեղ գալուց յետոյ, բոլորն էլ սպասում էին, որ նա հաշտութիւն կը կայացնի կառավարութեան և ամիրների միջև։

Բայց ինչպէս գործը ցոյց տուեց, դա այնքան էլ հեշտ չէր. կառավարութիւնը պահանջում է ամիրներից վայր դնել զէնքերը և յանձնել կառավարութեան՝ հաւաքված բոլոր հարկերը զէնքերի հետ, և որից յետոյ ամիրներին ներումն կը շնորհվի և թոյլ կը տրվի դարձեալ պաշտօնի մէջ մնալ։

Հաւաքած հարկերը, խոշոր գումարներ, բոլորն էլ արդէն կոլոլշիացել են, մէջտեղ ոչինչ չը կայ, իսկ զէնքերն էլ ամիրները վախենալով կառավարութեան վրէժխնդրութիւնից, չեն կամենում յանձնել նրան։

Ամիրներն էլ ցանկանում են իրանց մօտ մնայ զէնքերը և իրանց էլ նշանակեն իրանց ցեղերի պետ։ Հարկերը վերադարձնելու համար ժամանակ տրվի։

Զահիր-Դովլէի և ամիրների մէջ յաճախ դրութիւնը սուր բնաւորութիւն էր ստանում Ռաշիդ-Սուլթանի պատճառով, որ իր վայրագ ձիաւորներով մի պատուհաս էր դառել ազգաբնակութեան գլխին։

Օր չէր անցնում, որ քաղաքում մի դէպք չը պատահի Ռաշիդ-Սուլթանի մարդկանց ձեռքով։

Օրը ցերեկով կողոպտում էին մարդկանց, թալանում էին գիւղերից ներմուծվող մթերքները։

Եւ այդ բոլորի պատճառով ազգաբնակութեան մէջ բարձրացան տրտունջներ։

Ամիրները, ի նկատի ունենալով որ վըտանգաւոր դրութիւն կը ստեղծվի իրանց համար, մի կերպ աջողացրին և նրան հեռացրին Բարֆրուշից, իրանցից տալով ճանապարհածախսի համար բաւականին փող։

Նրա գնալուց յետոյ կարծվում էր, որ հեշտութեամբ հաշտութիւն կը կայանայ, որովհետև նա շատ անգամ էր խոչընդոտ հանդիսանում և սպառնում Զահիր-Դովլէին։

Այսօր անակնկալ կերպով լուր տարածվեց, որ երէկ Զահիր-Դովլէն քաղաքից մեկնել է ծպտեալ կերպով, որի մասին նոյն իսկ շահզադէն չէ իմացել, որի տանն էր նա մնում։

Զահիր-Դովլէն Մէշէդսէրում է այժմ և պատրաստվում է Թէհրան գնալու։

Զահիր-Դովլէի գնալն խորհրդաւոր է, որի պատճառը շատ տեսակ են բացատրում։

Լուր է տարածվել, որ Ռաշիդ-Սուլթանը նորից յետ է դառնում։ Եթէ իսկապէս նա նորից քաղաք մտնի, դրութիւնը վտանգաւոր կը լինի։

Սպասենք նոր դէպքերի։

Էլ-Դօն

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մեզ հաղորդում են իբրև լուր, որ վիպասան Աւ. Ահարոնեան բանտից ազատվել է խոշոր գրաւականով։

◆ Մոսկվայի Բուտիրսկի ժամանակաւոր բանտում երեք քրէական բանտարկեալներ սպանեցին հինգ բերդապահների։ Պատճառը, նրանց ասելով, բանտային կեանքի յոգնածութիւնն է և նրան կերպարանափոխելու ցանկութիւնը։

◆ Գեներալի որդի՝ միլիօնների ժառանգ Բուտուրլինի թունաւորման սենսացիօն գործի առիթով վկաների հարցաքննութիւնը վերջացաւ։ «Բժիշկ» Պանչենկօյի վարմունքը մնում է հանելուկային։

◆ Ժանտախտը Խարբինում աւելի սպառնական չափերի է հասնում։ Երկիւղ են կրում, որ գարնանը նա կը տարածվի ամենուրեք։

◆ Թիւրքիան իր ձեռքը ձգած պարսկական շրջաններում նշանակեց կառավարիչներ երիտասարդ-թիւրք օֆիցերների և աշխատում է մօտենալ Պարսկաստանին։

◆ Ռուսաց սենատի 200-ամեայ հանդէսը նշանակված է մարտի 2-ին։

◆ Պետական Խորհրդի դատական մասնաժողովը որոշեց զեմստվային պետերին զրկել զեմստվային պետական ֆունկցիաներից։

◆ Ֆինլանդական սէյմի տալման ընտրվեց Սվինխուվուդը։

◆ Նիւ-Եօրկում ուժանակով լի շոգենաւի պայթումից սպանվեցին մօտ 25 մարդ։ Վիրաւորվածների թիւը հասնում է 1,000-ի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱԳ
ԵՒ
ՀԻՄՆԱՒՈՐԱՊԷՍ
ՆԵՐԿՎՈՒՄ ԵՆ
ՄԱԶԵՐԸ ԵՒ ՄԻՐՈՒՔԸ
ՄԱԶԵՐԻ ՆԵՐԿՈՎ
ԸՆԿՈՅԶԻ ՀԻՒԹԻՑ
Պարֆիւմերիայի
№4711

Անմնասակարութեան համար երաշխաւորութիւն
ԻՍԿԱԿԱՆԸ ՄԻԱՅՆ ՄԱՐԿԱՅՈՎ
ՊԱՐՖԻՒՄԵՐԻԱ
ՖԵՐԴ. ՄԻՒԼԳԵՆՍ №4711
Կեօլն—Րէյնի վրա։ Հիմնված 1792 թ.։ Բաժանմունքը Ռիգայում։
Մատակարար շատ Բարձրագոյն Պալատների։
Ծախվում է դեղատներում, դեղատնային և պարֆիւմերային խանութներում։
(M. 436432/436450) 32. 6—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ“ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ
ԱՏՐՊԵՏԻ
ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«Պատկերներ» Թիւրքահայերի կեանքից	1 ր.	— կ.
«Վիքեալայի գաղտնիքը» » »	1 »	—
«Ալմաստ», 1 հատոր » »	1 »	—
«Ալմաստ», 2 » » »	1 »	—
«Ջաւահիր», 77—78 թ. ռուս-թիւրքական կռւից արկած	1 »	—
«Վիպակներ», երկու վէպ Թիւրքահայերի կեանքից	1 »	—
«Բժժուհները», երեք պատկեր » »	1 »	—
«Կարելի է սիրել», պատմական վէպ	1 »	—
«Խև Կարապետ», Թիւրքահայ կեանքից	1 »	—
«Քոռ Եղիկ» » »	—	30 »
«Շէնոց» » »	—	30 »
«Ժառանգներ» » »	—	30 »
«Բերսայի Առաքելը» » »	—	25 »
«Թուլումբաջիներ» » »	—	15 »
«Դիմակներ», երգիծական արկածներ	—	50 »
«Շուշան», 3 արարուածով, Թիւրքահայ կեանքից	1 »	—
«Սարրաֆ», 5 արարուածով, »	—	30 »
«Խիլաֆաթ», պատմ. տես. սիւննիների մասին	1 »	—
«Իմամաթ», » » շիաների »	—	50 »
«Հողատիրութիւնը Կովկասում»	—	10 »
«Мамедъ-Али Шахъ»	1 »	—
«Имаматъ»	1 »	—
Рахимъ-Ханъ «Сардаръ»	—	20 »
Бабиты и Бебаиты. Истор. разсл. цѣна	—	60 »
«Իրանի պատուհանները»	1 »	—

Դիմել՝ Թիֆլիս, «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» գրավաճառանոցը։
(Հ. Հ.) 71. 2—1

ԵՐԿԱԹԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՎԵՀԱՓԱՌ ԻԶՄԻՐԼԵԱՆԻ յիշատակին նուիրված Տարազի յատուկ №-ալմանախի 28 պատկերը այլևս հատով չէ վաճառվում. սակաւաթիւ օրինակները կը տրվեն բացառապէս նրանց, որոնք միանուագ բաժանորդ կը գրվեն ԱՂԲԻՒՐԻՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ և ՏԱՐԱԶԻՆ, ուղարկելով բաժանորդագնի հետ և 2 ր.։ Սրանք կը ստանան ալմանախի №-ը, 18 գոյնով Վեհափառ Իզմիրլեանի Սանահնի դարաւոր հոյակապ կամարների տակ մեծադիր պատկերը, 1911 թ. օրացոյց, 6 տեսակ պօստ-կարտեր Վեհափառ Իզմիրլեանի և նրա շուրջը։

Մինչև Մեծ-Պասը նրանք, որոնք կամենում են զարդարել իրանց տունը Վեհափառ Իզմիրլեանի 18 գոյնով մեծադիր պատկերով, պէտք է ուղարկեն 1 ր. 50 կ.։ Պատկերը կուղարկվի յատուկ խողովակի մէջ։ Վերադիր վճարով՝ 2 ր.։ Դիմել՝ ТИФЛИСЪ. Редакція „АГБЮРЪ-ТАРАЗЪ“.

ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ տարեկան բաժանորդագինը պրեմիաներով, յաւելուածներով 10 ր. (արտասահման 18 ր.), դպրոցական աշակերտի հասցէով 5 ր.։
(Հ. ու.) 30. 0—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՂԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ՔԱՔԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ԶԻԼԲԵՐՇԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—8

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
ՆԵՐՔԻՆ և ԶՂԱՑԻՆ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունել. ամեն օր (առաւօտ. ժ. 9—12
(երեկոյեան ժ. 5—7
(Ե. Հ. Կ.) 1254. 100—30

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ
ԼԻԱԿԱՏԱՐ
ՀԱՅ-ՌՈՒՍ ԲԱՌԱՐԱՆ
Լոյս տեսաւ ՉՈՐՐՈՐԴ տպաւ. պրակ։
Բառարանի բաժանորդագինը 6 ր. և 5 ր.։ Թիֆլիսում կարելի է բաժանորդ գրվել «Գիր» գրախանութում (Вельяминовская, 7)։ Նոյն հեղինակի Լիակատար Ռուս-Հայ Բառարան, գինը 8 ր., կազմած 9 ր.։ Դիմել՝ А. Дагбашяну. Тифлисъ, Евангуловская ул. № 8, II эт.
90. 1—1

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրոֆ. Mathien -ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տէլ. № 1067.
(օ. մ.) 1179. 100—57

ԲԺԻՇԿ
Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր (10—11 ժ. առ. (երեխաների)
(5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. Տէլէֆօն № 388.
(Ե. Հ. Կ.) 909. 100—89

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликоская улица, домъ казенный.